

Բ. Ա. ՂԱՐԱԳՑՈՒՅԱՆ

ԴԻՊԼԱԾԱՅԻՆ ԵՎ ՊՈՏՆՆՑԻԱԼ ԲԱՌԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԱՅՆԵՐՆԵՒ ԲԱՌԱՍՏՆԵՂՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Յուրաքանչյուր լեզվի կրող, յուրաքանչյուր անհատ իր խոսքային գործունեության ընթացքում, բանավոր, թե գրավոր, նորից և նորից կրկնում, վերարտադրում է իր խմացած բառերը, որոնք բազմիցս օգտագործել է ինքը, կամ օգտագործել են ուրիշները՝ նույն լեզվի կրողները։ Այսպիսով, լեզվի բառապաշարը մշտապես վերարտադրվում է տվյալ լեզուն կրող հասարակության անդամների կողմից տարբեր կապակցություններում և փոխանցվում սերնդեսերունդ։

Սակայն պատահում է այնպես, որ խոսքային գործունեության ժամանակ, ձգտելով հասնել բարձր արտահայտչականության, խախտում են բառակազմության նորմաները, տվյալ իրադրության, տվյալ լեզվական համատեքստի թելադրանքով ստեղծում են նոր բառեր կամ բառակապակցություններ, որոնք չհակասելով լեզվի ընդհանուր համակարգին և չմտնելով լեզվի բառապաշարի մեջ, հանդես են գալիս որպես որոշ տեսակի նորաբանություններ, ոչ կանոնական լեզվական միավորներ, որոնց արժեքը պայմանավորված է միմիայն տվյալ համատեքստով։ Այդպիսի բառերը լեզվաբանության մեջ արժանացել են ուշադրության և ստացել հապաքս էյրեմենոն անվանումը (հունարեն *hápax eirēmenon*)՝ «մեկ անգամ արտասանված», կոչվում է նաև հապաֆս լոգոմենոն)։ Հայերեն դա կարելի է թարգմանել դիպլածային բառ կապակցությամբ, այսինքն այնպիսի բառ, որը գրողի կամ խոսողի կողմից օգտագործվում է մեկ անգամ, տվյալ դեպքի համար¹։

Անհատական բառաստեղծման հարցերը ռուս լեզվաբանության մեջ հատուկ ուշադրության են արժանացել²։ Ումանք այդ առումով քննության

¹ Տե՛ս Օ. Շ. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1966, гапакс эйременон, окказиональное слово տերմինների բացատրությունը։

² Տե՛ս А. Г. Лыков, Окказионализм и языковая норма, «Грамматика и норма», М., 1977, Н. И. Фельдман, Окказиональные слова и лексикография, ВЯ, 1957,

նյութ են դարձրել նաև առանձին գրողների լեզուն, նշել բազմաթիվ բառեր, որոնք չեն մտնում ուսաց լեզվի բառապաշարի մեջ: Այսպիսի մեծ թվով բառեր կան, օրինակ, Մայակովսկու ստեղծագործություններում, ինչպես, օրինակ՝ многопудие, поцекистый, миллионнополая, молоткастый, серпастый, прозаседаться և այլն³:

Այս կարգի բառերը, որոնք հանդիպում են նաև այլ գրողների գործերում⁴, և որոնցից բերն են մտել բացատրական բառարանների մեջ, ուսւ գրական լեզվի պատմության մեջ մնացել են որպես տվյալ գրողների խոսքային արվեստը բնութագրող փաստեր և գերակշռող մեծամասնությամբ այլևս չեն կրկնվել այլոց կողմից:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, տուրք տալով ֆուտուրիզմի ուղղությանը գրականության մեջ, մի շարք նոր բառեր ստեղծվեցին նաև հայ գրողների՝ Ե. Չարենցի, Գ. Աբովի, Ա. Վշտունու և այլոց կողմից, ինչպես, օրինակ՝ պոեզոգություն, ամենապոեմ, ամենամանաշոգեգալուստ (Ե. Չարենց), բիռապրում, արհավրա («Իմ շուրթերով արհավրա», գազույս (ածական), ծովլույս (ածական), ջեմամամրույր, արևնեզուկ, գալարցնորֆ («Արյունս եռել է շոգիս մեջ», նորից իմ գալարցնորֆիս մեջ Համբույր ու հալչում են հնչում»⁵), սովարշավ (Ա. Վշտունի) և այլն:

Անհատական բառաստեղծման երևույթը հատուկ է շատ լեզուների, և այն լեզուները, որոնք բառակազմական միջոցներով հատկապես հա-

№ 4, В. В. Лопатин, Рождение слова, М., 1973, А. Н. Смирницкий, К вопросу о слове, «Труды Ин-та языкознания» (АН СССР), т. 4, 1954; А. Г. Горнфельд, Новые словечки и старые слова, сб. «Муки слова», М.—Л., 1927, Г. О. Винокур, Маяковский новатор языка, М., 1943, Е. А. Земская, Окказиональные и потенциальные слова в русском словообразовании, «Актуальные проблемы русского словообразования» գրքում, 1, Самарканд, 1972, Э. И. Хампира. Об Окказиональном слове и окказиональном словообразовании, «Развитие словообразования современного русского языка», М., 1966. Բառադարձվածարանական նորակազմությունների նվիրված գրականության ցանկը տես՝ «Новые слова и словари новых слов» (Л., 1978) ժողովածուում, էջ 167—183:

3 Մի ուսումնասիրողի հաշվումներով (Վ. Պ. Պետրուշևիկա) Մայակովսկու միայն պոետական ստեղծագործություններում 2840 նորակազմություն կա:

4 Օրինակ՝ душедрянствовать, умонелепствовать, мордобитие (Շչեդրին), дамоподобный (Պուշկին), апельсинничать, лимонничать (Դաստևակի), громокипящий Տյուտչև) детный (Գորկի), очеловечивать, расчеловечивать (Գերցեն), безбурность моря (Ա. Բլոկ), пуховитые, голосатые (Եսենին) և այլն, որոնք նույնպես չեն մտել ուսաց լեզվի բառարանների մեջ:

5 Գ. Աբով, Միայն կիրն, Թիֆլիս, 1919: Այս տիպի շատ այլ բառեր կան նաև Գ. Աբովի «Դանակը բկին» (Մ., 1923) և վաղ շրջանի այլ ստեղծագործություններում:

րուտտ են, բնականաբար, այդպիսի բառերի ստեղծման ավելի մեծ հը-
նարավորություններ ունեն։

Հայ լեզվաբանություն մեջ անհատական բառաստեղծման հարցերը
հատուկ ուշադրության չեն արժանացել⁶, թեև հենց հայերենում է, որ
այդ կարգի բառերի թիվը և նորերի ստեղծման հնարավորությունները
մեծ չափերի են հասնում։

Ներկա ուսումնասիրությունը նպատակ ունի քննելու ժամանակակից
հայերենի անհատական բառաստեղծման մի քանի հարցեր՝ կապված
դիպվածային և դրանց հետ սերտորեն առնչվող պոտենցիալ բառերի
հետ, ցույց տալ դիպվածային և պոտենցիալ բառերի մի շարք առանձ-
նահատկությունները, բնութագրել այդ կարգի բառերը և փորձել դրանք
գնահատել հայոց լեզվի բառաստեղծման ընդհանուր գործընթացի տե-
սանկյունից։

I

Նախ՝ դիպվածային բառերի մասին։

Դիպվածային բառերը սովորաբար կազմվում են լեզվի համակարգին
հատուկ բառակազմական կաղապարների հիման վրա, պատրաստի նը-
շտանների, պատրաստի կաղապարների օրինակով, և, որպես կանոն,
կազմության բաղադրյալ են։ Դիպվածային բառերը թեև սովորաբար
կազմվում են լեզվի կենսունակ արմատներից և ածանցներից, իրացնե-
լով լեզվի բառակազմական պոտենցիալ հնարավորությունները, սակայն
էականը նրանցում այն է, որ հատուկ նպատակով ստեղծված այդ կարգի
բառերը մեծ մասամբ ունենում են բաղադրիչների ամսովոր համադրու-
թյուն։ Դրանով դիպվածային բառերը անմիջապես աչքի են ընկնում,
իրենց նորությամբ և անսովորությամբ ուշադրություն գրավում, առա-
ջացնելով համապատասխան ներգործություն։

Այդ ցույց տալու համար բերենք Հ. Սահյանի մի բանաստեղծու-
թյունը, որտեղ ստեղծված մի քանի «սխալ», ոչ կանոնական բառերի
օգնությամբ հեղինակը հասնում է բարձր արտահայտչականության։

«Եվ կուլ տվեց ամպը հուզմունքն արտասվահեղձ,
Մի բուռ կայծակ ծոցում անթեղելով...
Ապա եղրափակիչ որոտն արտասանեց
Իր անթարգմանելի ամպերենով։

⁶ Թեև առանձին գրողների լեզուն ուսումնասիրելիս՝ բանք նշել են տվյալ գրողի
ստեղծած անհատական նորարարությունները։

Յուրտը իջնում է մեկ-մեկ, բրեն ցույց է տալիս
Ու փախչում է ձորից սրտնեղելով:
Բայց գիշերն էլի սպառնում է սարից
Իր տակավին անվարժ ցրտերենով:

Քամին մեկ-մեկ դեղնած տերևներ է քշում,
Անեղձ գեղեցկությունն ավերելով:
Բարդինները աշնան հեքիաթներ են խշշում
Իրենց ինֆնադրոշմ ծառերենով...

Եվ աշնանամուտի խաղաղ այդ քառսում,
Լցված այդ քառսի տաք սերերով,
Բանաստեղծը կարծես աստծո հետ է խոսում
Իր նախաստեղծ, իր խիստ պարզերենով»:

(ԳԹ, 16, 2, 1979, ՀՄ «Աշնանամուտ»)

Այս բանաստեղծության մեջ ամպերեն, ցրտերեն, ծառերեն, պարզե-
րեն (ինչպես և ինֆնադրոշմ) բառերը դիպվածային են, տվյալ համա-
տեքստում որոշակի խմաստ ունեն և բանաստեղծին օգնում են արտա-
հայտելու ասելիքը:

Ահա մեկ այլ օրինակ: «Հայկական դպրոցներում մայրենի լեզվի
դասավանդումը գործնական դարձնելու վերաբերյալ էլ շատ հոգավածնի
են գրվել, նրանցում ուղղակի կոչ էր արվում աշակերտներին ֆեռակաճա-
խեղդ շանել, այլ նրանց կատարելապես գրագետ մարդիկ դարձնել (Դ.
1978, № 11, 77): Այստեղ ձյունախեղդ, ծխախեղդ և նման բառերի օրի-
նակով հոգավածագիրը կազմել է ֆեռակաճախեղդ բառը՝ օգտագործված
փոխաբերական իմաստով, որը շատ արտահայտիչ կերպով ընդգծում,
շեշտում է ասելիքը:

Դիպվածային բառերը հանդես են գալիս որպես նորաբանություն-
ների, սակայն բուն կամ համագործածական նորաբանություններից նրանք
որոշակիորեն տարբերվում են:

Սովորաբար նորաբանություն են համարվում այն բառերը կամ
արտահայտությունները, որոնք ստեղծվում են որևէ նոր առարկա կամ
հասկացություն նշանակելու համար, ինչպես՝ նեյլոն, ուղղաթիռ, լուսն-
էջֆ, լուսնահեթիռ, լուսնախցիկ, ձեռնագեղորդ, տափօղակ, ծրագրավո-
րում, կաթնատուն և այլն: Նորաբանություններից շատերը տարածվում
են, համընդհանուր ճանաչում գտնում, կիրառվում տարբեր անձանց
կողմից, տարբեր տեքստերում և առձանագրվում բառարաններում: Ժա-

մանակի ընթացքում նորաբանություններից շատերը դադարում են այլևս նորաբանություն դիտվելուց (օրինակ՝ խորակարաբ, առողջարան և այլն)⁷:

Դիպվածային բառերի կյանքը միանգամայն այլ է: Նրանք ստեղծվում են հատկապես տվյալ դեպքի համար, ապրում են միայն տվյալ խոսքում, տվյալ խոսքային շրջապատում: Այդպիսի բառերը մեծ մասամբ պատկերավոր են, վառ, արտահայտիչ, սակայն դրանք հաճախ ունենում են շատ կարճ կյանք և տվյալ համատեքստում իրենց դերը կատարելուց հետո անցնում զնոմ են, հավակնություն չունենալով էլ մտնելու լեզվի բառապաշարի մեջ: Այսպես, օրինակ, երգիծական մի հոգվածում (ԵՃ, 17, 1, 1972) ստեղծվել էր «ջանավաճառ» բառը: Այս բառը դիպուկ կերպով բնութագրում էր այն վաճառողներին, որոնք շահադիտական նպատակով շուայում են «ջանը» և ըստ էության վաճառում դա, դիմացը հավելյալ դրամ կորզելով գնորդից: Ջանավաճառը տվյալ հոգվածում իր դերը լավագույնս կատարելուց հետո մոռացվեց:

Իհարկե, չի բացառվում, որ դիպվածային նորաստեղծ բառերը, մանավանդ գեղարվեստական գործերում հանդիպող, հատկապես այնպիսիները, որոնք համատեքստից դուրս էլ կարող են հասկանալի լինել, շարունակեն ապրել, օգտագործվելով այլոց կողմից: Այսպես, օրինակ, վ. Տերյանի հորինած տխրադալով բառը օգտագործեց նաև Ե. Չարենցը: Այդ բառը դարձավ նրա մի ժողովածուի վերնագրի բաղադրիչը՝ «Երեք երգ տխրադալով աղջկան»: Սակայն այդ բառը հայոց լեզվի բառապաշարում, այնուամենայնիվ, մնաց մեկուսացած, որպես բանաստեղծական, ոչ սովորական բառ:

Շատ անգամ դժվար է կանխորոշել, թե տվյալ նորաստեղծ բառը կամրանա՞, կմտնի՞ լեզվի բառապաշարի մեջ, ստանալով համընդհանուր ճանաչում, թե ոչ: Դա հաճախ պայմանավորված է մի շարք հանգամանքներով և առաջին հերթին՝ հենց բառի բնույթով:

Այսպես, օրինակ, աթոռամուլ, աթոռապաշտ բառերի օրինակով, որոնք նորաբանություններ են և մտել են բացատրական նոր բառարանների մեջ, կազմվել է նաև աթոռակոխով բառը: Այդ բառը նույնպես միտում ունի արմատավորվելու, դիպվածային բառից վերածվելու կանոնականի և մտնելու լեզվի բառապաշարի մեջ: Բերենք այդ միտումը հաստատող բնագրային օրինակներ: «Աթոռի համար կովեց մարդկանց հետ, դարձավ աթոռակովի մասնագետ» (Ո, 1974, № 18, 21): «Մեր հիմնարկում աշ-

7 Նկատի պետք է ունենալ, որ ինչպես նորաբանությունների, այնպես էլ դիպվածային բառերի մեկնաբանման մեջ չկա միասնական կարծիք, և երբեմն հայտնվում են իրարամերձ տեսակետներ (տե՛ս, օրինակ, Ն. Ի. Ֆելդմանի և է. Ի. Խամպիրայի հիշատակված աշխատանքները): Նորաբանությունների մասին տե՛ս նաև այս ուսումնասիրության էջ 42—43-ը:

խատանքը «յուզարխներից» չէ, այլ շոր, ռոճկական, անգամ արծաղկով էլ չկա (ԵՆ, 25, 1, 1975, 3):

Առհասարակ միշտ չէ, որ հնարավոր է դիպվածացին և համագործակցական բառերն իրարից հստակորեն սահմանադատել:

Հայտնի իրողություն է, որ հայերենը նոր բառեր ստեղծելու բառակազմական հարուստ, կարելի է ասել, անսպառ հնարավորություններ ունի և այդ տեսակետից շատ պարարտ հող է ներկայացնում նաև դիպվածային բառերի ստեղծման համար:

Դիպվածային բառերի ամենից շատ հանդիպում ենք երգիծանք և հումոր պարունակող ժանրերում և շարժոթյուն: Դիպվածային բառեր ոչ հազվադեպ հանդիպում են և գեղարվեստական արձակում, ինչպես նաև գիտական գրականություն մեջ: Կան գրողներ, որոնք առանձնահատուկ հակում ունեն նոր բառեր ստեղծելու:

Ուսումնասիրողները դիպվածային բառերին տվել են մի շարք անվանումներ՝ «անհատական բառեր», «հեղինակային բառեր», «անհատական-հեղինակային նորաբանություն», «համատեքստային նորաբանություն», «միանգամյա նորաբանություն», «գրական նորաբանություն», «անհատական-ոճական նորաբանություն», «ինքնաստեղծ բառեր» (СЛО-ВО—САМОДЕЛКИ), «էքսպրոմտային բառեր», «ասուպային բառեր», «պոետական նորաբանություններ» և այլն⁸: Նեոլոգիզմ բառի համաբանությունը կազմվել է նաև էքզոլոգիզմ բառը⁹:

Պատկանելով լեզվի կերարկությանը, այսինքն միայն խոսքին, դիպվածային բառերը հանդես են գալիս որպես խոսքի բառային միավորներ, բայց ոչ լեզվի և պաշտնաւորված են խոսքային տվյալ իրադրությունում:

Որոշ դիպվածային բառեր իրենց կառուցվածքով և բառակազմական կաղապարով այնպիսին են, որ դժվարությամբ են տարբերվում լեզվական մյուս նորաբանություններից: Այդպիսի բառերը դժվարությամբ են տարբերվում և պոետենցիալ բառերից:

Այսպես, օրինակ, հարդագող («հարդագողի ճանապարհ»), գրագող, ուսագող և այս կարգի այլ բառերի համաբանությամբ, երգիծական մի հոգվածում հեղինակը ստեղծել է բրդագող, բրդագողություն բառերը («ԲԳ օպերացիան», ՍՀ, 24, 8, 1973, 4): Բուրդ և գող բաղադրիչների համադրումից միանգամայն հասկանալի է, որ խոսքն այստեղ վերաբերում է բուրդ գողացողին: Սակայն այդ հասկացությունը հայերենի բառապաշարի համար ըստ էության լեզվական, հասարակական որևէ արժեք չի

⁸ Տե՛ս В. В. Лопатин, Рождение слова, М., 1973, էջ 64:

⁹ Տե՛ս «Журналист», 1968, № 3, էջ 20:

ներկայացնում: Այդպես յուրաքանչյուր առարկա նշանակող բառի կարելի է ա հոդակապով միացնել գող արմատը և ստանալ՝ քղթագող, մատիտագող, բաժակագող, մագող, հացագող, պանրագող, ձմեռակագող, ծիրանագող, խնձորագող և այլն, և այլն, բառեր, որոնք հայերենի բառապաշարի և նրա հարստացման տեսանկյունից, կրկնում ենք, արժեք չունեն: Բառը, ինչպես հայտնի է, իրականության, որն է երևույթի ընդհանրական արտահայտությունն է, լեզվում միայն ընդհանուրն է, մինչդեռ տվյալ դեպքում բրդագող բառը ունի մասնավոր, միմիայն խոսքային, իրադրական նշանակություն:

Ինչ վերաբերում է կառուցվածքային չափանիշին, ապա նա որոշիչ դեր չի կատարում, քանի որ շատ դիպվածաբանություններ, որոնք ըստեղծվում են ամենակենսունակ բառակազմական կաղապարների հիման վրա, այնուամենայնիվ, նորմատիվ չեն:

Տվյալ դեպքում բրդագող բառի կազմությունը այնքան սովորական է, որ շատերի համար նրա նորաստեղծ լինելը կարող է չընկալվել: Առհասարակ բառի նորաստեղծ կամ դիպվածային լինելը ավելի լավ է ընկալվում լեզվաբանության մասնագետների կամ տվյալ լեզվին քաջատեղյակ անձանց կողմից, մինչդեռ միջին մակարդակի ընթերցողը դա կարող է նույնիսկ չնկատել:

Անհրաժեշտ է նշել նաև, որ դիպվածային բառերը առանց բացատրության կամ առանց համատեքստի երբեմն անհասկանալի են, որովհետև դրանց իմաստը, ինչպես վերևում նշեցինք, մեծ մասամբ միայն համատեքստում, համապատասխան խոսքային միջավայրում է բացահայտվում: Օրինակ, Դ՛նչ է նշանակում բուրուտ բառը: Առանց համապատասխան խոսքաշարի, դժվար է որոշակի պատասխան տալ: Մինչդեռ Հ. Մաթևոսյանի ստեղծած այդ բառը «Նրանք բոլորն էլ ապրում են խնձորենու բուրուտի մեջ» (ՀՄԾ, 117) արտահայտությունում իմաստավորվում է, ստանում համատեքստային իմաստ:

Մեկ այլ օրինակ. «Հուլանյութը գրանցվում է գերբարակ քղբերիզի վրա գերմանը տառերով» (Գ, 1977, № 6, 94): Առանց ընդարձակ համատեքստի այստեղ հազիվ թե հասկացվի, որ հուլանյութ նշանակում է այն նյութը, որը պետք է քննություն հանձնողին որևէ բան հուշի: (Այս նախադասության մեջ նորակազմ են նաև գերբարակ, գերմանը, քղբերիզ բառերը): Կամ թե, կհասկացվի՞ արդյոք, հնուկ բառը առանց համատեքստի, ինչպես՝—«Ողջո՛ւյն, ծերուկ»—Գյուղում ասում էին հնուկ:—«Բարե, հնուկ» (ՀՄԾ, 89):

Այդպիսի բառեր շատ կան նաև չափածոյում: Օրինակ՝ «Եվ նա էր ահա, որ ձևավորեց մի ղենք ծանգախույս, Եվ ծովավորեց Ասպարեզ մի

նոր» (ՊՍՄԱՄ, 239): Ժանգախույս բառը իմաստավորվում է միայն այս տողերում:

Նշենք, որ դիպվածային բառերը, որոնք մեծ մասամբ ստեղծվում են եղած որևէ բառի (կամ բառերի) համաբանությամբ, օրինակով, երբեմն հանդես են գալիս որպես այդ բառի հականիշը: Օրինակ՝ «Բայց էս ինչքան իմ շրնկեր-ճակակիրներից, էդքան էլ իմ ընկեր համակիրներից եմ վախենում» (ՀՄԾ, 73), «Սա ոչ թե գեղագիտություն է, այլ գեղագրություն» (ՀՀ-ից), «Իմ ձեռքով էլ չպիտի տնավելում» (ՊԱՆՔԶ, 141), հմմտ. տեղավորվեմ:

Այսպիսով, դիպվածային բառերը, ինչպես արդեն նշեցինք, ստեղծվում են տվյալ դեպքի համար և սովորաբար գործածվում են միայն մեկ անգամ, տվյալ իրադրությանը, տվյալ խոսքին համապատասխան և ունեն անհատական բնույթ, թեև հասկանալի են տվյալ լեզվի բոլոր կրողներին: Որոշ դեպքերում միայն դիպվածային բառերը կարող են տարածվել, ձեռք բերել քաղաքացիական իրավունք, հաստատվել լեզվի բառապաշարում և մտնել նորմատիվ բառարանների մեջ:

Նկատի ունենալով դիպվածային բառերի բնույթը՝ ըստ լեզվի համակարգի նկատմամբ ունեցած հարաբերության, դրանք կարելի է բաժանել երկու տիպի: Առաջին տիպին հատկացվում են այն դիպվածային բառերը, որոնց կադուսթրունը թեև համապատասխանում է հայերենի բառակազմական կաղապարներին, սակայն սովորական բառերից նրանք տարբերվում են բարդության բաղադրիչների ավանդական նորմաներին՝ համապատասխանող, անսովոր համադրությամբ:

Այսպես. «ներսքս հացադուլ է հայտարարել հիմա, ու սիրադու՛ սիրտըս: Եվ ոտներս են միայն, որ չեն հայտարարում իրենց գործադուլը» (ՊՍՄԱՄ, 304): Այս նախադասության մեջ սիրադուլ բառը, որը կազմված է գոյական+գոյական կաղապարով, գործադուլ, հացադուլ բառերի համաբանությամբ, կանոնական չէ, որովհետև դուլ «դադար, հանգիստ» արմատը ըստ ավանդության, ըստ բառակազմության մեջ հատկատված նորմաների, չի բաղադրվում զգացմունք արտահայտող արմատների հետ, այդպիսի մասնակաղապար ժամանակակից հայերենի բառակազմությանը հատուկ չէ:

Մեկ այլ օրինակ. «Տառեճակաճ լաչակի փոխարեն աղջիկն այժմ առաջարկում է գլխի շինյունը» (Գ, 1978, № 3, 96): Թեև ունենք պապեճակաճ ածականը, սակայն վերջինիս նմանակությամբ կազմված տառեճակաճ բառը կանոնական չէ, դիպվածային է:

Գոյական+ային ածականակերտ կաղապարը ժամանակակից հայերենում շատ գործուն է (հմմտ. փառային, ինտիմատային, բնակարանային և այլն): Սակայն այդ կաղապարին հատուկ չէ ային ածանցի կցու-

մը ծառատեսակների կամ բույսերի անվանումների, ինչպես՝ կեչիային, մի բառ, որ կազմել է հեղինակը¹⁰, ինչպես և՝ «Ալխոն ցավից մոռացավ հեծիլորի ովորքունը» (ՀՄՕ, 182), «Մարդն ախր անկրկնելի է, դու պեսք է լինես դուական և ոչ թե տոլստոյական» (ՀՄՕ, 84):

Երկրորդ տիպի դիպվածային բառերը կազմվում են հայերենի բառակազմական կաղապարներին անհամապատասխան ձևերով: Սրանք արտակաղապարային բառեր են, որոնք գրականության մեջ հանդիպում են հազվադեպ: Օրինակ՝ «Եվ քանի-քանի հայ հրաժիշտներ, Քոյապիւրա-նար ու Բեզապաշտներ, ելած քո ազգի բեղուն ընդերքից...» (ՊՍԱԶ, 254), «Սրբատաշ վեմը ձևակերպ կառնի» (ՊՍՄԱՄ, 220), «Շնորհակալ եմ նորից ու նորից, Հորից ու մորից, բոլոր բոլորից, Որ ես ծնվել եմ այսպիսին, այսպես, Ամենամիակ և ամենատես» (ՀՄ, Գ, 1974, № 12, 3), ինչպես և՝ «Հետաաանըմնացած աղջիկ» (ԶԽՄՀ, 20)՝ հետամնաց և տանը մնացած աղջիկ, ամենանորաձևագույն տարազ» (Գ, 1976, № 12, 87), «ազատաքեթեամուրքուն» (բնի-ից) և այլն:

Եվ առաջին, և՛ երկրորդ տիպի դիպվածային բառերը կանոնական չեն:

Դիպվածային շատ բառեր ունեն կատակային բնույթ, որոնք ստեղծվում են տվյալ համատեքստին կամ ասվածին կոմիկական երանգավորում տալու կամ այդ երանգավորումն ուժեղացնելու նպատակով: Կատակային բնույթի դիպվածային բառերը սովորաբար կազմվում են հանրահայտ որևէ բառի նմանակությամբ: Դրանք, այսպես կոչված, «ասուպալին» բառեր են, որոնք մեկ օրվա կյանք ունեն:

Բերենք այդ կարգի բառերի օրինակներ համապատասխան համատեքստերով՝ քաղված մեծ մասամբ հրգիծական գրականությունից: Դիպվածային բառերն ընդգծված են¹¹:

«Մինչև վերջ չկարողացա կարդալ» Ադամի սիրանքը «վերտառությամբ գրպարտապատումը» (Գ, 1977, № 3, 92), հմմտ. հուշապատում, «Ես մասմթերումից չեմ վախենում... ես ոսկորամթերումից եմ վախկենում» (Գ, 1978, № 11, 6), «Ամսելիքը կթրջենք» (Գ, 1973, № 9, 91), հմմտ. տաբելից, «Գ. Արշակյանը շատագիր չէ» (Գ, 1978, № 9, 90), հմմտ. շատախոս, «Անօգտակար հաճածոներ» (Գ, 1974, № 9, 93), հմմտ. օգտակար հաճածոներ, «Նրա ջինսն շալվարի տասնվեցերորդ (նեքքեից

¹⁰ Էսկ ուր է իմ մաքուր, իմ բյուրեղյա, իմ ոռական կեչիային... — Ապացուցում է. իսկ ինքը ոռական կեչիային չի—տափաստանային, խառնածինային է» (Մեքերումը համառոտված չէ): Հ. Մաքեռյան, Մառերը, Երևան, 1978, էջ 83:

¹¹ Մենք չենք անդրադառնում այն հարցին, թե արձանագրված դիպվածային բառերը որքանով են հաջող կամ անհաջող:

հաշված) գրպանում խշխշում էր ստեղծագործական գործուղման թերթիկը, որի վրա դեռ չէր շորացել ԵՏ-ի (Երգիծանքի տուն) ախարադրոշմ կնիքի թանաքը» (Գ, 1977, № 4, 92), Հմմտ. արծվադրոշմ, «Ելույթ կունենա երգիծանքի տան ինքնագործ ծիծաղախումբը, մեծաբեկիչը՝ Նովելա Մաքսեյանի» (Գ, 1977, № 6, 94), Հմմտ. երգչախումբ, մենեջեր և այլն, «Տագնապախոտով հեռախոսանիշը լսելով՝ նա շտապում էր ԵՏ-ին առնթրի պարտեզը» (Գ, 1977, № 6, 93), «Գայլի գառասիրությունը արցունք է բամբում ընթերցողի աչքերից» (Գ, 1976, 12, 88), Հմմտ. մարդասիրություն, «Երբ վերապայլ բառախուրձը կապված էր, հրատարակչական մասնախմբի հասցեով ստացվեցին նամակներ», (Գ, 1977, № 4, 95), Հմմտ. վերագրյալ, «Նախ և առաջ պետք է ծանոթանալ համապատասխան քննադատների հետ, հրավիրել մերժադաքային որևէ հարմարավետ պատվանոց (սննդատուն) և հենց այնտեղ, առաջին ու վերջին կենացների արանքում, ջերմ ընծայականով նրան նվիրել գրախոսվելիք դիրքը» (Գ, 1976, № 12, 78), «Խնդրում եմ կադրերի վերահամման ու և զտման դեպքում ինձ ազատել իմ դիմումի համաձայն» (Գ., 1974, № 2, 96), «Հնարավոր չէ... կազմակերպել զոֆանչարանության խմբակ և պարզաբանել զոբանչի ու փեսայի փոխհարաբերությունները ներկա ժամանակաշրջանում» (Գ, 1973, № 12, 94), «Բազմագրպան ջինսը գերադասելի է մյուս շավարտեսակներից» (Գ, 1973, № 8, 95), «Ցավոք, ժամանակի սղության պատճառով հնարավոր չէ ձեր ուշադրությանը ներկայացնել նաև մյուս ստորադրյալների ֆաղցրաչեւ, ազնվակեղծ բաժակաճառերը, որոնց մեջ պարզանստակ երևում են... փայլուն ունակությունները» (Գ, 1973, № 9, 96), «Եկեք մի լավ դասաբաղնիս անենք, առաջարկեց դպրոցի դիրեկտորը» (Գ, 1973, № 6, 94), «Հետո տղան հորից թաքուն նույնպիսի պայման կապեց թռչակաշատ պապի հետ» (Գ, 1973, № 7, 93), «Հաջորդ տարի 20-ից ավելի դիմորդանայրեք եկան» (Գ, 1973, № 8, 93), «Իսկ մենք յուր ենք գնում սխտորակոխ երշիկով ու ապխտած կանանցով (ՀՄԾ, 10), «Կուպեի ուղևորը կիսաճաղատ է» (ՀՄԾ, 220), «Մինչև գրակեր դառնալս գործարանում ու գյուղում ես բավական փող էի աշխատել» (ՀՄԾ, 47), «... և հասնում է կամ չի հասնում ուզված ոսկուն...» (ՀՄԾ, 36), «Սովորական գրակերներ են, ճիշտ մեր նման, Եվա, սովորական թղթակիցներ են» (ՀՄԾ, 72), «Միամիտ պայծառությամբ ինքնամատուցվում էր սպիտակ հացը (ՀՄԾ, 69), «...մայրը քիթը կպցնում է պրիստավի սապոգի ծայրին... և բարձր է խոսում, որ փորաբլի ետևում լսելի լինի «խշխխալությանը» (ԳԹ, 19, 1, 1974, 3), «Միտուհիդ մեռել է, գնա տախտակավորի» (ՍԳ, 1971, № 1, 62)¹² և այլն:

¹² Ինչպես տեսնում ենք բերված օրինակներից, որոշ դիպվածային բառեր փոխաբերական իմաստ ունեն:

Զերկարացնելու նպատակով ուղղակի թվարկներ մի շարք բառեր և արտահայտություններ առանց համատեքստի:

Այսպես՝ ծիծաղալեա (Գ, 1977, № 2, 91), լեզվաբուծարան (Գ, 1977, № 3, 93), ժպտակից բարեկամներ (Գ, 1976, № 12, 87), սփռոցակիցներ (Գ, 1976, № 12, 86), խաղիստ (Գ, 1974, № 3, 92), հումորաբանասիրական ֆակուլտետ (Գ, 1977, № 4, 94), երգասենյակ (Գ, 1977, № 2, 91), կրթասենյակ (Գ, 1977, № 2, 91), հարցասենյակ (Գ, 1977, № 1, 94), ծիծաղասենյակ (Գ, 1977, № 1, 94), ինֆնալուսանկար (Գ, 1973, № 1, 92), ինֆաստեղծագործություն (Գ, 1973, № 1, 92), ինֆնաբամբասանք (Գ, 1977, № 1, 94), դրամատանձ (Գ, 1977, № 2, 94), տիեզերամոբիլ (Գ, 1976, № 10, 92), հումորասեր հասարակություն (Գ, 1973, № 6, 90), անեկդոտասեր հասարակություն (Գ, 1973, № 11, 96), բրդամակաբնառու ռլխարներ (Գ, 1977, № 2, 94), մրցապատմածք (Գ, 1976, № 10, 93), գունամատիտային երանգներ (Գ, 1973, № 2, 95), մարմնաբանական ֆակուլտետ (Գ, 1974, № 9, 92), բարվոքագույն (Գ, 1977, № 3, 95), բանասիրության կարգալույծ (Գ, 1977, № 2, 94), դրամարկալիք հաշոդություն (Գ, 1974, № 8, 91), ստեղծագործական զրոսանք (Գ, 1976, № 11, 90), դարսածալած թուլք (Գ, 1973, № 8, 96), խաշխոռվածի բնկերություն բնխ-ից), կիսագործնական ժամադրություն (Գ, 1977, № 3, 93), գրչաշարժում (Գ, 1977, № 1, 93), մարմնամասնիկ (Գ, 1974, № 11, 96), սրնաբաններ (Գ, 1974, № 8, 94), սրնահմայություն (Գ, 1974, № 8, 94), կանխավկայել (Գ, 1973, № 9, 96), վշտազգեստ (Գ, 1973, № 8, 95), ամուսնագետ, ամուսնագիտություն (Գ, 1974, № 2, 92), արարուտերեն (Գ, 1973, № 9, 91), սուպերկրիմինալ, սուպերերկար (Գ, 1974, № 5, 93) և այլն:

Բերված բառերը և արտահայտությունները մեծ մասամբ կատակային բնույթի են, որոնք համատեքստում իրենց երգիծական դերը կատարելուց հետո մոռացվում են:

Նշենք նաև, որ այստեղ հիշատակված մի շարք բառեր, ինչպես, օրինակ, կրթասենյակ, հարցասենյակ, բազմագրպան, ինֆնալուսանկար, սրնահմայություն և այլն, բնույթով այնպիսին են, որ անհրաժեշտության դեպքում կարող են կյանք առնել:

Ստեղծվում են նաև դիպվածային հապավումներ, որոնք նույնպես, մեծ մասամբ երգիծական բնույթի են: Օրինակ՝ երիտկին (Գ, 1976, № 10, 92)՝ երիտասարդ կին, ինֆնաբուն (Գ, 1974, № 9, 91)՝ ինքնագործ ժամանակավոր բարձրագույն հաստատություն, մասնուս (Գ, 1976, № 12, 86)՝ մասնավոր ուսումնական տարի, գիտղեկ (Գ, 1977, № 6, 94)՝ գիտական ղեկավար, ԵՊԱ (Գ, 1974, № 6, 93)՝ երիտասարդ գիտնականների ակումբ,

ԶՄԻՅԱ (Գ, 1974, № 5, 92)՝ գորանշները միջազգային ֆեդերացիա, ՊԹԸ (Գ, 1977, № 1, 92)՝ պատահական թարգմանիչների ընկերություն, «Յտահուշակ բանաստեղծ Վշտակ Եփրատը Զեզ է նվիրում իր մարտյան ձոներգը» (Գ, 1977, №3, 91) և այլն: (Հապավումների բացատրությունը վերցված է նույն աղբյուրներից):

Հանդիպում են նաև դիպվածային հարադրական բարդություններ, ինչպես՝ գիտնական-հովիվ (Գ, 1977, № 2, 94), էփ-դիմորդներ (Գ, 1976, № 12, 86) և այլն:

Նորաստեղծ բառերի մեջ ուրույն տեղ պետք է հատկացնել բանաստեղծական այնպիսի բառերի, որոնք ներշնչանքի բերումով (երբեմն նաև հանգի համար) ստեղծվում են բանաստեղծների կողմից՝ անհրաժեշտ արտահայտչականության կամ պատկերավորության հասնելու նպատակով, բառեր, որոնց բնույթը համատեքստային է, այսինքն դրանք այնպիսին են, որոնք իմաստավորվում են միայն տվյալ բանաստեղծության մեջ և ապրում են այնքան ժամանակ, որքան ապրում է տվյալ բանաստեղծությունը:

Այդպիսի շատ բառեր կան ստեղծված աստղ, արև, արեգ(ակ), ամպ, ռսկի, ծով և այլ արմատներով, որոնք թեև կազմության միանգամայն օրինաչափական են, սակայն օգտագործված են մեկ անգամ. ինչպես, օրինակ՝ աստղափրփուր (ԱԻ), աստղաբողբոջ (ՀՇ), աստղաշշուկ (ՀՇ), աստղաշար (ՀՇ), աստղապսակ (ԴՎ), աստղակուտ (ԴՎ), աստղափշուր (ԴՎ), աստղահատ (ԴՎ), աստղահեռ (ԴՎ), աստղահամար (ԴՎ), աստղավառ (ԳՍ), աստղակաթ (ԳՍ), աստղապարտեզ (ԳՍ) և այլն:

Բանաստեղծություններում հատկապես շատ են հանդիպում ոչ կանոնական, դիպվածային բայեր, օրինակ՝ ուրագել (ՊՍ), կացիներ (ՊՍ), ազդանջանել (ՊՍ), արշալուսել (ՎՏ), մթնշաղել (ՎՏ), մշուշել (ՎՏ), փարոսել (ՎՏ), լուսել (ԵՁ), շեփուրել (ԵՁ), համասփյուռել (ՀՇ), վարդանալ (ՀՇ), արևազարդել (ԱԻ), արձանել (ԱԻ), խտասուրել (ԴԴ), կայծել (ԴԴ), հիգել (ԴԴ) և այլն¹³: Բայական այս կարգի նորակազմությունների հանդիպում ենք ոչ միայն չափածոյում. օրինակ՝ արմուկել (ՀՄԾ, 54), կանեփագունել (ՀՄԾ, 63), գահընկեցվել (ՀՇ, ԱՁ8, 11):

Հայտնի է, որ բանաստեղծական բառերից շատերը հաճախ մեծ դրժվարություն են հարուցում բառարանային բացատրության համար: Դրա պատճառն այն է, որ այդ բառերը իմաստ են ստանում տվյալ համատեքստում, տվյալ խոսքային շրջապատում և այդ պատճառով համատեքստից դուրս նրանք հաճախ անհասկանալի, անըմբռնելի են:

¹³ Այստեղ հիշատակված բայական օրինակների մի մասը վերցված է Ա. Պապոյանի «Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը» ուսումնասիրությունից, Երևան, 1970, էջ 134:

Դիպլաժային բառերի ավելի սակավ շահով հանդիպում ենք և գիտական գրականության մեջ: Դրանք որևէ մասնավոր դեպքի վերաբերող բառեր են:

Բերենք մի քանի օրինակ գիտական գրականությունից:

Այսպես՝ ուրարտագիտությունը ժխտող անձանց և ուրարտագիտության ժխտումն ընդհանուր կերպով արտահայտելու համար մի հոդվածում հեղինակը կազմել է ուրարտաժխտողներ և ուրարտաժխտական բառերը, որոնք իմաստավորվում են տվյալ հոդվածում (ՊՀԲ, 1970, №3):

Դիպլաժային բառերը, որոշ հանգամանքների բերումով, երբեմն կարող են օգտագործվել ոչ մեկ անգամ և ոչ մեկի կողմից, այլ որոշակի ժամանակահատվածում ունենալ ակտիվ կյանք: Այսպես՝ դարիս սկզբներին, երբ բռնն վեճեր կային ուղղագրության մեջ փոփոխություններ մտցնելու շուրջը, կիրառության մեջ մտան հյունագրություն (վյուն = հյուն՝ և տառի անունից) և վեվագրություն (վեվ՝ վ տառի անունից) բառերը, նայած այն բանին, թե վ հնչվող ու-ի փոխարեն գրում էին ւ (օրինակ՝ նուեր-նւեր), թե վ (նուեր-նվեր): Հիշյալ բառերը, որ հաճախ էին հոլովում ժամանակի բանավիճային հոդվածներում, ուղղագրական բարեփոխությունից հետո մոռացվեցին:

Այժմ անդրադառնա՞նք բանավոր խոսքին, թեև բանավոր խոսքից վերցրած օրինակներ արդեն հիշատակել ենք:

Բանավոր խոսքը, մանավանդ խոսակցական լեզուն, այսինքն անկաշկանդ, չնախապատրաստված խոսքը, նորակազմությունների, ինչպես և բառերի նրբիմաստային նոր կիրառությունների մեծ հնարավորություններ է ընձեռում: Այդ աղատությունը պոտենցիալ կերպով գոյություն ունի ամեն մի խոսքում: Երբեմն դիպլաժային բառեր են ստեղծվում պետք եղած բառը տվյալ պահին չհիշելու պատճառով:

Բերենք մի քանի օրինակ՝ գրի առնված բանավոր խոսքից:

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի նիստերից մեկի ժամանակ, երբ քննարկվում էր շակերտների միջև առնչվող անունների հոլովական վերջավորությունների և հոդերի գրության հարցը, կոմիտեի անդամների մի մասն այն կարծիքին էր, որ հոլովական վերջավորությունները և հոդերը պետք է դնել շակերտներից ներս, իսկ մյուսները, ընդհակառակն, առաջարկում էին վերջավորությունները և հոդերը առանձնացնել գծիկով և գրել շակերտներից դուրս: Այդ ժամանակ ելույթ ունեցողներից մեկը օգտագործեց ներշակերտականներ և արտաշակերտականներ բառերը, որոնք տվյալ խոսքային իրադրության մեջ իրենց դերը լավագույնս կատարեցին, խմբավորելով երկու տարբեր կարծիքների կողմնակիցներին:

Այլ օրինակներ. «Մայրդ էլի հումակերությամբ է զբաղվում:—Չէ, հիմա արդեն կերակրակեր է դարձել, «նա իր օրինակներով ուղղակի օրի-

նակախնդր է անում»։ «Քաջնազարուքում մի՛ արա», «էսօր աշակերտ-ները դասադուլ են հայտարարել», «Պետք է պայքարել շակերտամուլու-քում դեմ», «Հիմա նորարարները ավելի շատ են, քան հեռարհները»։

Կենդանի խոսակցական լեզվում հարադրական կրկնավոր բառերի օրինակով շատ հաճախ նոր բառեր են կազմվում երկրորդ բաղադրիչի սկզբնահնչյունի փոփոխությամբ, ինչպես՝ «Խմբագիր-մմբագիրներ հետ ես գործ չունեմ»։ «Հնդկած-մոդկած չունե՞ս, բեր շուտ կապենք»։ «էսօր նիստ-միստ չկա»։ «Պրծնում ե՞ս պլան-մլանից»։ Ինչպես և՛ գրիչ-մրիչ, քուլք-մուլք, տղա-մղա, աղբիկ-մաղբիկ և այլն։ Խոսակցական, անկաշ-կանդ լեզվում շատ բնորոշ է այս տիպի բառերի կազմումը։

Այս ոլորտում շատ տարածված է նաև ինչ դերանունով կազմված բառերի օգտագործումը։ Օրինակ՝ «էդ ֆիլմը ինչպե՞ս է»։ «Զիլիում ին-չերե՞ն են խոսում»։ «էս գդալը ինչո՞ւ է»։ Լավ չլսելով ասվածը, երբեմն հարցնում են՝ «Ինչություն էր անո՞ւմ»։ «Ինչպե՞ս զինվոր է՞ր»։ «Ինչա-յի՞նը»։ «Ինչապաշտ է՞» և այլն։ «Ժամավճարով ե՞ս աշխատում»։— «Զգի-տեմ առայժմ ինչավճար է», «Հարությունը ինչավճար է աշխատում»։— Մասվաճառ (բարբառային շեշտադրությամբ)։

Այստեղ հիշատակված ինչ դերանունով կազմված բառերի մի մասը, օրինակ՝ ինչերեն, ինչական, ինչոտ, ինչացու, ինչանոց¹⁴, կրկնվող բա-ռեր են և այդ պատճառով մտել են նաև լեզվի բառապաշարի մեջ¹⁵։

Լեզվում, որտեղ միշտ էլ կարիք է զգացվում արտահայտչական նոր ձևերի, թարմ անվանումների, զանազան նրբերանգներ պարունակող նոր իմաստների, որոնք ոչ միայն արտահայտում են խոսողի վերաբերմուն-քը, այլև խոսքին հաղորդում անհրաժեշտ գունեղություն, հաճախ են հանդիպում նաև բառերի դիպվածային, ոչ սովորական փոխաբերացում-ներ, դիպվածային բառօգտագործումներ։ Սակայն այդ հարցերի մասին տվյալ ուսումնասիրության մեջ խոսելը մեր նպատակներից դուրս է¹⁶։

Ելնելով դիպվածային բառերի մասին վերևում ասվածից, դրանք ընդհանուր առմամբ կարելի է բնութագրել հետևյալ գծերով։

1. Դիպվածային բառերը ստեղծվում են տվյալ խոսքային իրա-դրությանը, տվյալ համատեքստին համապատասխան, տվյալ խոսքային

14 Ինչ դերանվան և ածանցի համադրմամբ կազմված բառերը աշխարհաբար նոր լեզվին հատուկ իրողություններ են։

15 Խոսակցական լեզվում երբեմն հանդիպող առ եմ համարում (այսինքն՝ արհա-մարհում եմ), համ է ընկնում (այսինքն՝ համընկնում է) և նման արտահայտությունե-րը լեզվական այնպիսի աղավաղումներ են, որոնք արդյունք են տգիտության և չեն կարող հատկացվել դիպվածային բառերին։

16 Բերենք միայն 2 օրինակ. «...քեզ տանում է Մոսկվա խոնուն քաղաքի մյուս ծայրը...» (ՀՄԾ, 90), «Սենատորներից յուրաքանչյուրը հանճարեղ զո-րավար էր, բազմածալ դիվանագետ, հզոր օրենսդիր...» (ՀՄԾ, 91)։

միջավայրի պահանջով, կիրառվում միայն մեկ անգամ (պայմանականորեն ասված) և դրանով հակադրվում լեզվի կանոնական բառերին¹⁷:

2. Դիպվածային բառերը, որոնք որպես կանոն բաղադրյալ են, մեծ մասամբ ստեղծվում են լեզվում գործող բառակազմական կաղապարների հիման վրա:

3. Դիպվածային բառերից շատերը մնայուն չեն, ոչ կանոնական (ոչ նորմատիվ), այդ պատճառով չեն պատկանում լեզվի բառապաշարին: Դրանք հաճախ հակադրվում են լեզվի ավանդական նորմաներին, հանդես գալով որպես անճշտութուններ: Սակայն սովորական անճշտություններից դիպվածային բառերը տարբերվում են նրանով, որ պատճառաբանված են, դիտակցաբար ստեղծված: Դիպվածային բառերի մի մասը միայն, որպես ստեղծագործական—հեղինակային նորաբանություններ, կարող է մտնել լեզվի պասիվ բառապաշարի մեջ:

4. Դիպվածային բառերը մեծ մասամբ ստեղծվում են գիտակցորեն, հատուկ նպատակադրությամբ, բարձր արտահայտչականության հասնելու համար: Արտահայտչականությունը դիպվածային բառերի ամենաէական հատկանիշն է:

5. Դիպվածային բառերը ստեղծվում են հենց խոսելու կամ գրելու ընթացքում, մինչդեռ կանոնական բառերը վերարտադրվում են միայն, կրկնվում: Դիպվածային բառերի օգտագործումը ստեղծագործական բրնույթ ունի և անհատական է:

6. Վերոհիշյալ հատկանիշներից բխում է, որ դիպվածային բառերը պատկանում են խոսքի մակարդակին, ոչ լեզվի. նրանք հանդես են գալիս որպես խոսքային միավորներ, չպատկանելով լեզվի համակարգին:

Ըստ օգտագործման ոլորտների դիպվածային բառերը հանդես են բերում որոշ առանձնահատկություններ: Ըստ այդմ կարելի է տարբերակել՝

1. Ստեղծագործական կամ հեղինակային նորաբանություններ: Դրանք այն բառերն ու բառակապակցություններն են, որոնց ստեղծողը հայտնի է: Օրինակ՝ տխրադալով (ՎՏ), մթնշաղիլ (ՎՏ), գալիքնաշեր (ԵՉ), գալիքնափայլ (ԵՉ), սիրադու (ՊՍ), կացինեկ (ՊՍ), ուրագեկ (ՊՍ), ովություն (ՀՄ) և այլն:

Այս կարգի բառերը ապրում են այն բանաստեղծության կամ այն

17 Որևէ հարցի քննության ժամանակ դիպվածային բառերը կարող են մեջբերվել, վերարտադրվել, կրկնվել, բայց դա, իհարկե, այլ բան է: Գրողը կարող է դիպվածային բառը միևնույն տեքստում մի քանի՝ անգամ օգտագործել, բայց դրանով դարձյալ բառի բնույթը չի փոխվում: (Հմտտ «շակերտամուլ» «շակերտամուլություն», որոնք այս օրերին ոմանց կողմից «հոլովվում են»:

ստեղծագործության մեջ, որտեղ նրանք ստեղծվել են: Հեղինակային նորարարանությունները մեծ մասամբ զետեղվում են նաև հայոց լեզվի նորմատիվ բացատրական բառարաններում:

2. Կատակային (երգիծական) բառեր և բառակապակցություններ (օրինակ՝ դիմորդաճաշեր, պատվանոց, քոշակաշատ պապ, զրպարտապատում և այլն): Այս տիպի բառերը և արտահայտությունները մեծ մասամբ ապրում են մեկ օրվա կյանքով և բնականաբար չեն մտնում բացատրական բառարանները:

3. Գիտական դիպվածային բառեր և կապակցություններ (օրինակ՝ ուրարտաժիտոզներ, ներշնչեռտականներ, արտաշնչեռտականներ և այլն): Այս կարգի դիպվածային բառերը ծառայում են համապատասխան համատեքստի և մեծ մասամբ չեն մտնում բառարանները:

4. Խոսակցական բառեր և կապակցություններ (օրինակ՝ ինչություն, ինչային, ինչավոր, գրիչ-մրիչ, բուլք-մուլք, ինչավնար և այլն): Այս կարգի բառերը, թեև երբեմն կրկնվող, բայց լեզվի կիրարկությանը պատկանող բառեր են, որոնց մի մասը համընդհանուր ճանաչում ստանալով, տեղ է գտնում նաև բացատրական բառարաններում (համտ. ինչոտ, ինչական, ինչերեն և այլն):

Հայերեն, ստեղծագործական-հեղինակային, դրանց թվում և բանաստեղծական շատ բառեր, որոնք օգտագործված են միայն մեկ անգամ և անքակտելիորեն կապված են որոշակի իմաստապատկերային համատեքստի հետ, ի տարբերություն մի շարք այլ լեզուների, մեծ մասամբ տեղ են գտնում բացատրական լիակատար բառարաններում, ունենալով, իհարկե, ոճական համապատասխան նշում (բանաստեղծությունում հազվագեղ և այլն)¹⁸:

18 Ռուս բառագետները և բառարանագիրները, նորաստեղծ բառերը բառարանների մեջ ընդգրկելու հարցում շատ խստապահանջ են: Նույնիսկ դասական գրողների ստեղծած դիպվածային բառերից միայն շատ քչերն են մտել բառարանների մեջ: Լ. Վ. Շչերբան, խոսելով նորաստեղծ բառերի բնույթի մասին, գրում է. «Thesaurus-ը բնութագրվում է նրանով, որ բառացանկի մեջ ընդգրկվում են բոլոր այն բառերը, որոնք որևէ մեկի կողմից օգտագործվել են թեկուզև մեկ անգամ... հետևողական լիակատար նորմատիվ բառարանում... պետք է տրվեն բոլոր այն բառերը, որոնք տվյալ լեզվում ունեն անառարկելի գործածություն («безусловное хождение»), Л. В. Щерба, Опыт общей теории лексикографии, ИАН ОЛЯ, 1940, № 3, էջ 106: Մեջբերումը արված է Ն. Ի. Ֆելզմանի «Оказиональные слова и лексикография հոդվածից, ВЯ, 1957, № 4, էջ 67): Այսինքն, նորմատիվ բառարանների մեջ պետք է մտցվեն միայն այն բառերը, որոնք օգտագործված են ո՛չ մեկի կողմից, այլ ունեն որոշակի տարածում:

Շչերբայի այս տեսակետը ընդունվել և կիրառվել է գրեթե բոլոր ռուս բառարանագիրների կողմից: Բազմաթիվ նոր բառեր, որոնց ներկայումս հանդիպում ենք թեկուզև նշանավոր գրողների ստեղծագործություններում կամ կենտրոնական մամուլում, և ո՛չ մեկ անգամ, երբ նախաձեռնվում չեն, հատկացվում են դիպվածային բառերին և նոր-

Դիպլոմաժային բառերի հետ որոշ ընդհանրություններ ունեն, այսպես կոչված, պոտենցիալ բառերը:

Ինչպես դիպլոմաժային, այնպես էլ պոտենցիալ բառերի ըմբռնման մեջ չկա միասնական կարծիք¹⁹:

Սովորաբար պոտենցիալ են կոչվում այն բառերը, որոնք պոտենցիալ կերպով գոյություն ունեն լեզվում և կենդանություն են առնում, երբ տվյալ խոսքային իրադրության մեջ առաջանում է դրանց անհրաժեշտությունը, կարիքը²⁰:

Պոտենցիալ բառերը հայերենում միանգամայն ազատորեն ստեղծվում են համակարգով պայմանավորված և բարձր կենսունակություն ունեցող բառակազմական կաղապարների հիման վրա և, որպես կանոն, բաղադրյալ են: Դրանք բառեր են, որոնք շունեն հասարակայնորեն ընդունված և ամրակայված ավանդություն:

Պոտենցիալ են այն բառերը, որոնք յուրաքանչյուր անգամ ոչ թե վերարտադրվում են (ինչպես սովորական բառերը), այլ վերստին ստեղծվում այն դեպքերում, երբ խոսքում առաջանում է տվյալ երևույթն անվանելու կարիք:

Պոտենցիալ բառերը ստեղծվում են աննկատելի, ինքնաբեր կերպով, տարերայնորեն, շարժանաճով ուշադրության և աչքի չընկնելով, հակառակ դիպլոմաժային բառերի, որոնք մեծ մասամբ ստեղծվում են հատուկ նպատակադրությամբ և հենց ուշադրություն գրավելու համար:

Բառաստեղծումը հայերենում բավականաչափ ազատ է և ընթանում է այնքան հեշտ ու դյուրին, որ շատ նորակազմություններ դժվարությամբ են տարբերվում տարածում ստացած բառերից²¹:

մատիվ բառարաններից դուրս են թողնվում: Այսպես, օրինակ, гладкопись բառի օգտագործման վերաբերյալ բերվում է ութ վկայություն և, այնուամենայնիվ, այդ բառը համարվում է դիպլոմաժային: Мелкотемье բառի հայերեն «մանրաթեմայնություն» համարժեքը սովորական է և՛ իմաստով, և՛ կառուցվածքով և մտել է էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը», մինչդեռ նույն բառը ռուսերենում համարվում է դիպլոմաժային և չի ընդգրկվում նորմատիվ բառարանում (տե՛ս այս մասին Ն. Ի. Ֆելդմանի հիշատակված հոդվածը, էջ 71):

19 Տե՛ս, օրինակ, Ն. Ի. Ֆելդմանի, Է. Ի. Խամպիրայի հիշատակված աշխատանքները:

20 Տե՛ս Հ. Զ. Պետրոսյան, Ս. Ա. Գալստյան, Թ. Ա. Ղաբադյոսյան, *Լեզվաբանական բառարան, Երևան, 1975*, «պոտենցիալ բառապաշար», Օ. Տ. Ахманова, Сло-варь лингвистических терминов, М., 1966, «потенциальное слово», Г. О. Винокур, Маяковский новатор языка, М., 1943, էջ 15:

21 Այդպես է նաև գերմաներենում ու ճապոներենում: Ռուսերենում, սակայն, վիճակը այլ է: Ռուսերենում նորաստեղծ բառերը անմիջապես աչքի են ընկնում, որը բացատրվում է ռուսերենի բառաստեղծման առանձնահատկություններով:

Պոտենցիալ բառերի համար բնութագրիչ է այն, որ նրանք թեև չեն մտնում լեզվի բառային կազմի մեջ, սակայն նրանց առաջացումը և կիրառումը պատկանում է լեզվին և ապահովվում է բառային ամբողջ համակարգով ու բառակազմական օրինաչափություններով։ Այսպիսով, պոտենցիալ են այն բառերը, որոնք գոյություն ունեն լեզվական պոտենցիալում՝ պայմանավորված բառակազմական համակարգով։

Պոտենցիալ բառերը ստեղծվում են բառաստեղծական միջոցների շտեմարանից, որը մեր լեզվում ունի անսպառ հնարավորություններ։ Մի շարք արմատներ և ածանցներ ժամանակակից հայերենում նոր բառերի կազմության մեջ առանձնապես կենսունակ և արտադրողական են, և նրանցից անսահմանորեն կարող են կազմվել նորանոր բառեր։

Այսպես՝ ցի||ցցի||ացի ածանցով «տվյալ տեղի բնակիչ, ծնունդ» նշանակությամբ, երևացի, ամերիկացի, կաղապարի հիման վրա, տեղանուններից կարելի է կազմել նույնօրինակ բազմաթիվ բառեր, ինչպես սևացի, խաչյացի, սուգացի, բեյրութցի, բենինցի, բանգլադեշցի, պանամացի, օրյուցի, գիտաֆանտաստիկական գրականության մեջ նաև՝ մարսցի, սատուրնցի և այլն։ Օրինակ՝ «...քանի որ սրանք նախկին արգելիքներ են, դարաչորացիներ, թուխմարիցիներ, ապարանցիներ, մարդիկ, որոնք այգի-պարտեզ չեն ունեցել, ո՛չ իրենք, ո՛չ իրենց պապերը» (ԳԹ, 1, 6, 1979, 4)։

Հատուկ անուններից համապատասխան ածականներ կազմելու համար շատ կենսունակ են յան, ական ածանցները, ինչպես, օրինակ՝ ծաղկածոյան, հրազդանյան, մուսալեռյան, մուրմանսկյան, նյույորքյան, սայաթևովյան, տերյանական, տոլտուցյական, մայակովսկիական, չիկագոյական, նիկոլիական և այլն։

Տեղանուններից կազմված վերահիշյալ տիպի ածականներից նորերը կարելի է կազմել մերձ բաղադրիչով, օրինակ՝ մերձհրազդանյան, մերձ-ենիսեյյան, մերձօրյան, մերձերևանյան, մերձծաղկածոյան և այլն։

Պոտենցիալ բառերի կազմության մեջ շատ կենսունակ են նաև ություն, ացու, անի, վարի, ովի, իկ, իչ, ունի, գործ, որդ, որեն և մի շարք այլ ածանցներ։ Դրանց մի մասը առանձնապես բնորոշ է խոսակցական լեզվին։ Օրինակ՝ ացու ածանցով կարելի է կազմել և հաճախ կազմում են՝ բորշացու, նաշացու, ջինսացու, գոգնոցացու և նման տիպի բառեր, ովի ածանցով՝ առնովի, բերովի, վերցնովի, կապովի, ծածկովի, դնովի, հրավիրովի և այլն, վարի ածանցով՝ հիմարավարի, ապուշավարի, ախմախավարի, օրիորդավարի, տիկինավարի, ռաբիսավարի և այլն, ավարվել բաղադրիչով՝ շալավորվել, ամառանոցավորվել, կոտորավորվել, կահույքավորվել և այլ նման տիպերի բառեր։

Իկ նվագական-փաղաքական ածանցով շատ բառեր են կազմում

հատկապես փոքրիկների հետ խոսելիս, ինչպես՝ հացիկ, կարիկ, մսիկ, փորիկ, գազարիկ, խնձորիկ և այլն: Գրականության մեջ նույնպես հանդիպում ենք իկ ածանցով շատ բառերի, որոնք պատենցիալ բնույթ ունեն և շին մտնում բառարանի մեջ: Օրինակ՝ «ժիրիկ մանչուկ» (ՊՍԱԶ, 166), «գանգուրիկ քուրիկ» (ՊՍԱԶ, 166), «Այդպես էլ մնաց մեների ու մենակ, Հոգին աննեցուկ, ինքը անհենակ (ՊՍԱԶ, 166), «Քարայծր նորից իր քարայծրիկի դունչիկն էր լիզում կիրճում ու ձորում» (ՊՍԱԶ, 86) և այլն:

Ուրջուն ածանցով պատենցիալ բառերի թիվը կարելի է անվերջ շարունակել, օրինակ՝ վիհարկելիություն, բնածություն, դուալիություն, գովելիություն, բծավորություն, հանգավորություն, կոտրածություն, գերհագեցածություն, զոդվածություն, գազաթայնություն, սեզոնայնություն, միջզոնայնություն և այլն:

Մի շարք սկզբնաբաղադրիչներ հատկապես շատ գործուն են պատենցիալ բառերի ստեղծման մեջ, ինչպես՝ նախա-, հետ-(ետ-), արտա-, ներ-, կիսա-, բազմա-, գեր-, ամենա-, հակա-, համա-, ինքնա-, ան- և այլն: Այսպես՝ նախա-, հետ-բաղադրիչներով՝ նախանունական, նախանունգրական, նախաթոխարական, նախառուսական, նախաինֆարկտային, նախամիլրահատական, համիլրահատական, նախապլենոմյան, հետպլենոմյան, նախապաշտպանական, հետպաշտպանական, նախաֆենական, հոֆենական և այլն, արտա-, ներ- բաղադրիչներով՝ արտահամալսարանական, ներհամալսարանական, արտաինստիտուտային, ներինստիտուտային, արտալեզվական, ներլեզվական, արտահիվանդանոցային, ներհիվանդանոցային, արտագերատեսչական, ներգերատեսչական, արտամոլորակային, ներմոլորակային և այլն, կիսա-բաղադրիչով՝ կիսախմել, կիսառտել, կիսավեն, կիսանաշ, կիսահրամայել և այլն, բազմա-բաղադրիչով՝ բազմախորշ, բազմադարս, բազմախոյակ, բազմամկան, բազմաշուրթ և այլն, ամենա-բաղադրիչով՝ ամենամոռացված, ամենահիվանդ, ամենախենդ, ամենանարպիկ, ամենամալիկ, ամենատգետ և այլն, վերա-ածանցով՝ վերաբեռնել, վերախառնել, վերատեսակավորել, վերանվիրել, վերամտածել, վերաթիել և այլն, գեր-ածանցով՝ գերման, գերբարակ, գերհաստ, գերհարպիկ, գերհմուտ, գերմոգաիկ գերփորձված և այլն, հակա-ածանցով՝ հակաինֆարկտային, հակապրեզիդենտական, հակագրիգորյական, հակադիրեկտորական, հակահամալսարանական և այլն: Համա- ածանցով՝ բազմաթիվ բառեր կարելի է կազմել տեղանուններից (կամ ազգությամբ անվանումից), ինչպես՝ համաամերիկյան, համաարաբական, համահրեական, համակիպրոսյան, համաֆրանսիական, համահնդկական, համահունգարական, համաաֆրիկյան, համաչինական, համավիետնամական

և այլն, ան- ժխտական նախածանցով՝ անգրպան, անօձիֆ, անֆայլ և այլն:

Պոտենցիալ բառերի բաղմուժյան մեջ շատ գործուն են նաև մի շարք արմատներ, ինչպես՝ բնակ, նման, ձև, կերպ, գույն, պաշտ, կիր, մոլ, գետ, ջուր, սեր, շար(f), վաճառ և այլն:

Տեղանուններից կարելի է կազմել շատ նոր բառեր բնակ արմատով, ինչպես՝ երևանաբնակ, կիրովականաբնակ, հայիթիաբնակ, միմակաբնակ, լուսնաբնակ, մարսաբնակ և այլն:

Նման վերջնաբաղադրիչը կարող է դրվել ցանկացած գոյականի վրա, և կունենանք՝ սեղանանման, թղթանման, տիկնիկանման, մշուշանման, տորֆանման, շափառանման, նակնդեղանման, աղջանման, ցույցանման, միտիեզանման, և այս կարգի բաղմաթիվ այլ բառեր:

Ձև և կերպ արմատները նման-ի համեմատությամբ սահմանափակ կիրառություն ունեն, բայց դարձյալ շատ գործուն են, ինչպես, օրինակ, կարելի է կազմել՝ լամպաձև, պահարանաձև, խողովակաձև, պատառափաղաձև, գդալաձև, գազանակերպ, ուրվականակերպ և այլն:

Վաճառ վերջնաբաղադրիչն ունեցող հայտնի բառերի օրինակով (ձկնավաճառ, հացավաճառ, մսավաճառ, տոմսավաճառ և այլն) և նրանց կողքին հաճախ կազմվում են կամ կարող են կազմվել այլ բառեր, ինչպես՝ պանքավաճառ, կտրուկավաճառ, ծառավաճառ, յուղավաճառ, բրդավաճառ, կարկանդակավաճառ, կաղամբավաճառ, աղկղավաճառ, ցորենավաճառ, վարունգավաճառ, ծամոնավաճառ և այլն, որոնք չկան բառարաններում, և պետք էլ չէ, որ լինեն²²:

Կիր արմատից դրոշակակիր բառի օրինակով կարելի է կազմել՝ նկարակիր, պլակատակիր, ծաղկակիր, ինչպես և՛ մագուրակիր, նավթակիր, ֆառածխակիր և այլն, շաբա արմատից՝ քվաշաբա, ձևաշաբա, ենթաշաբա, քաղմաշաբա, բառաշաբա, բայաշաբա և այլն:

Թվարկված բառերը և դրանց նման շատ այլ բառեր, եթե չեն դործածվել, ապա կարող են գործածվել համապատասխան իրադրության մեջ, կարիքը ներկայանալիս:

Շատ նոր բառեր կարելի է կազմել գույների անվանումներից դանազան երանգներ արտահայտելու համար: Այդպիսի նորակազմությունները հաճախ դժվար է լինում սահմանադատել արդեն գործածված և բառարանների մեջ մտած բառերից: Վերցնենք գույների ցույց տվող հետևյալ բառաշարքը՝ կրագույն, ձիթապաղագույն, բալագույն, դեղնականաչ,

²² Երբ մենք թվարկել էինք վաճառ բաղադրիչով կազմված ինքնաստեղծ բառերի շարքը (բառեր, որոնք չկան ԱղԱՀԲԲ-ում), պարզվեց, որ «շալոց լեզվի հանգարառարանում կան մեր կազմած յուղավաճառ, ցորենավաճառ, ալյուրավաճառ, սրճավաճառ բառերը, ինչպես նաև՝ օղևվաճառ, ակնցավաճառ, մետաքսավաճառ, մոմավաճառ և այլն (որոնք չկան ԱղԱՀԲԲ-ում)»։ նշանակում է, դրանք ունեցել են օգտագործում:

դեղնականաչագույն, դեղնակապտագույն, դեղնակաւմաւագույն, դարչնակարմրագույն, կանաչադեղնագույն, կանաչագորշագույն, կանաչամուրագույն, կանեփագույն, կարմրադեղնագույն, կաւմաւակապույտ, կարմրականաչ, կաւմագորշ, սևագույն, կպրագույն, դեղնագույն, դեղնաթուփ, մոխրասպիտակ (ՀՄՄ, 261), կաթնամոխրագույն (ՀՄՄ, 284), մոխրակապտաւուն (ՀՄՄ, 282), մոխրադեղին (ԳԹ, 9 12, 1977) կարմրաշագանակագույն (ԳԹ, 1, 6, 1979, 3), ոսկեշէկագույն (ԳԼՏ, 1976, № 11, 17), կաղնեկարմիր (ՀՄՄ, 48), մոխրակարմրաւուն (ՀՄՄ, 87), ժայռաւանագույն (ԳԹ, 19, 1, 1979, 3), փերուզակապտերանգ (ԳԹ, 19, 1, 1979, 3)²³:

Ընդամենը 31 բառ, որոնցից 13-ը տեղ են գտել ԱղԱՀԲԲ-ում (դրանք ընդգծւածներն են), 18-ը՝ ոչ: Վերջիններից 10-ը գրականութեան մեջ գործածւած են (աղբյուրները նշված են), 8-ը ինքնաստեղծ են:

Նայելով բերված այս բառաշարին, դժւար է հաստատապէս ասել, թէ սրանցից որքան պետք է տեղ գտնի բառարանում, որը՝ ոչ: Մեզ մոտ, սովորաբար, բառարանի մեջ մտնում են այս կարգի բոլոր այն բառերը, որոնք ունեն վկայութիւն: Մասնավորապէս գույների խառնուրդ ցույց տվող բարդութիւնները, որոնք կարող են լինել բաղմապիսի երանգներ արտահայտող, նաև երեք և ավելի գույների բաղադրութեամբ, պոտենցիալ մեծ հնարավորութիւններ ունեն:

Ժամանակակից հայերենում բարդութիւններ կազմելու անսահման հնարավորութիւններ կան երկու գոյականների համադրմամբ՝ ա հոդակապի միջոցով: Սա գոյական + գոյական կաղապարն է, որը շատ գործուն է և ներկայումս զգալիորեն ակտիւացել է, իր շրջանակի մեջ առնելով այդ կարգի նորանոր բառեր: Այսպէս՝ խաղի մակարդակը դառնում է խաղամակարդակ, լեզվի տարբերակը՝ լեզվատարբերակ, լուսնի ճառագայթը՝ լուսնաճառագայթ, կոշիկի տուփը՝ կոշկատուփ, օճառի տուփը՝ օճառատուփ, ամրակների տուփ-ամրակատուփ, ջրի պահանջ-ջրապահանջ, վարձի չափ-վարձաչափ, տերեխ թռչը-տերեխթռչիչ, տերեխ շորշորն-տերեխշորշորն, տերմինների շարք-տերմինաշարք, տերմինների համակարգ-տերմինաճամակարգ, հնչյունի տարբերակ-հնչյունատարբերակ, բառերի համակարգ-բառաճամակարգ, շեշտերի համակարգ-շեշտաճամակարգ, տառի տարբերակ-տառատարբերակ, լեզվի գործունեութիւն-լեզվագործունեութիւն, արևի կենտրոն-արեակենտրոն, հրաժեշտի խնջույք-հրաժեշտախնջույք և այլն, և այլն:

Բարդութիւնների այս տիպը բնորոշ է հատկապէս գրավոր խոսքին:

23 Գույնի ցույց տվող մի շարք բառերում, որոնցում կա գույնի (կամ գույների) անվանումը, գույն արմատի հավելումը դառնում է միանգամայն ավելորդ, ինչպէս՝ դեղնականաչագույն, դեղնակապտագույն, կանաչադեղնագույն, կանաչագորշագույն և այլն:

Բառակազմական հնարավորությունները հայերենում այնքան մեծ են, որ, թող չափազանցություն չլի, գրեթե չի հանդիպում որևէ ըստեղծագործություն, փոքր, թե մեծ, որտեղ չլինեն նորակերտ բառեր:

Այժմ բերենք գրականության մեջ գործածված, բայց բառարաններին մեջ չմտած նորակազմ բառերի մի խումբ և փորձենք դրանք արժեքավորել ժամանակակից հայերենի բառապաշարի հարստացման տեսանկյունից:

Այսպես՝ երկշեշտ, միաշեշտ, բայատարբերիչ, ձևաշարք, ենթաշարք, վերլուծականություն, սեռանիշ, ժխտանիշ, դիմաքվածամանականիշ, դիմաքվածամանակայնություն, դիմաքվածամանակային (ՌԻԱՀՀՀ), բազմածանց (ՍԳԱՀԱժՀ, 42), առանձնավրան (Գ, 1977, № 2, 94), արմատագուգորդում (ՍԳԱՀԱժՀ, 20), հեռուտալեկտորում (ՀՀ-ից), մանրանումբուր (ՀՀ-ից), վիտամինագործ (ԵԵ, 2, 12, 1973, 3), ձեռնագնդորդանի (ՀՀ-ից), քարախարբորոգային (Առ, 1977, № 5, 1), միգրաբային (Առ, 1977, № 51), աֆցանագրում (Առ, 1977, № 5, 41), դարձվածահեղված (ԲԵՀ, 1976, № 2, 233), անընկերություն (ՀՀ-ից), անբշնամանք (ՀՄԼ, 183), անկրծկալ (ՀՄՍ, 180), էստրադայնություն (Գ, 1974, № 3, 96), պարտեզավորվել (Գ, 1976, № 12, 17), մանկապարտեզային (Գ, 1973, № 1, 91), ժայռաբույր (ԳԹ, 19, 1, 1979, 3), հացքիություն (ԳԹ, 19, 1, 1970, 3), անհենակ (ՊՍ), անկափարիչ (Գ, 1979, № 2, 2), անմասնակից (ՀՄՍ, 123), բազայական (Գ, 1978, № 11, 44), ինֆնագրախոսություն (ՍԱԵԶ, 348), ինֆնակերպար (ՍԱԵԶ, 316), պառավավարի (Գ, 1978, № 11, 42), գոմեշավարի (ՀՄՍ, 184), ճանճավարի (Գ, 1972, № 2, 92), զինվորավարի (Գ, 1979, № 2, 8), լուսնասուվեր (Գ, 1978, № 11, 52), հակաարձանագրություն (Գ, 1978, № 11, 29), հակաշանական (ԵԵ, 2, 3, 1979), հակամոծակային (Գ, 1979, № 2, էջ 3), կիսաքալանված (Գ, 1978, № 11, 57), պարենանկուղ (Գ, 1977, № 1, 94), դյուրախոց (ԳԺ, 6, 5, 1977), սկզբնափուլ (ՀՀ-ից), սրապոզ (ՀՄՍ, 195), հրագալույս (ՀՄՍ, 201), ցնցողախցիկ (Գ, 1976, № 11, 91), դրախտախնձոր (Գ, 1977, № 4, 90), ախոռավորել (ՍԳ, 1971, № 16, 62), բանկոնավորվել (ՍԳ, 1971, № 1, 57), կարասավորվել (ՍԳ, 1971, № 1, 25), կոշիկավորվել (ՀՄՍ, 274), հրացանավորվել (Գ, 1979, № 2, 16), կանդալակիր (ՀՄՍ, 7), մոբեստոնակ (ՀՄՍ 8), սֆինգոթրեն (ՀՄՍ, 15), այրականոթեն (ՀՄՍ, 16), ամենաքափանցություն (ՀՄՍ, 11), կիեոփառատոնային (ՀՄՍ, 14), վագրախտ (ՀՄՍ, 17), ցորենաբուխ (ՀՄՍ, 18), հեռախոսախոց (ՀՄՍ, 18), կիեոեհիտասարգություն (ՀՄՍ, 43), արկածահետախուզային (ՀՄՍ, 43), անտագնալ (ՀՄՍ, 57), օծաշատ (ՀՄՍ, 70), չոբանաշուն (ՀՄՍ, 78), չոբանխորոված (ՀՄՍ, 67), տավարություն (ՀՄՍ, 75), մարգակոշիկ (ՀՄՍ, 67), կնգուղաձև (ՀՄՍ, 69), խառնածինային (ՀՄՍ, 83), բանջարկուտ

(ՀՄՍ, 203), կաղամբուտ (ՀՄՍ, 161), հոնուտ (ՀՄՍ, 163), մասրաբուսի (ՀՄՍ, 161), կրծեռակ (ՀՄՍ, 157), գարեհասկ (ՀՄՍ, 100), սեկահոտ (ՀՄՍ, 160), աղվեսահոտ (ՀՄՍ, 165), անարու (ՀՄՍ, 165), ծղրիդիկ (ՀՄՍ, 165), շավարիկ (ՀՄՍ, 6), կկվականչ (ՀՄՍ, 220), կիսառլորել (ՀՄՍ, 211), կիկոգործարար (ՀՄՍ, 101), բառախումբ (ՀՄՍ, 104), եզրակալ (բիլիարդի, ՀՄՍ, 92), կավեքիծ (ՀՄՍ, 92), պատումային (ՀՄՍ, 98), ռեկորդակիրություն (ՀՄՍ, 149), հակաէկզիստենցիալիստական (ՀՄՍ, 110), հեռախոսահամար (ՀՄՍ, 145), կիսասպորտային (ՀՄՍ, 143), ձյութավազ (ՀՄՍ, 175), ֆոտոտարեգրություն (ՀՄՍ, 83), գառիվարել (ՀՄՍ, 161)²⁴, աերոհեծանիվ (Գ, 1977, 2, 94), մկակահալած (Գ, 1979, № 2, 19), չարենցապատում (Գ, 1978, № 11, 71), դանուկակոշիկ (ՀՖ, 7, 3, 1971) և այլն:

Այստեղ հիշատակված մի շարք բառեր, ինչպես՝ դանուկակոշիկ, հեռուստալեկտորիում, մանրահումոր, մարզակոշիկ, պարենանկուղ, ֆոտոտարեգրություն, արկածահետախուզային և այլն, որոշակիորեն նորաբանություններ են և, որպես այդպիսիք, անշուշտ, պետք է տեղ գտնեն նաև բառարաններում: Սակայն, այնպիսի բառեր, ինչպես, օրինակ՝ դիմաքվածամանակահիշ, դիմաքվածամանակայնություն, ժխտանիշ, պառավալարի, գոմեշավարի, ճանճավարի, հակաարձանագրություն, հակամոծակային, հակաշանական, ծղրիդիկ, անտագնալ, անկախարիշ, բազայական, կիսաքալանված, սֆինգսորեն, տավարություն, հացքիություն, կեզուլածև և այլն, կարծում ենք, որ պետք է դասել պոտենցիալ բառերի շարքը, բառեր, որոնք բառարանների մեջ կարող են և չմտցվել²⁵: Այստեղից կարելի է եզրակացնել, որ պոտենցիալ բառերի շարքը կարելի է դասել ոչ միայն այն բառերը, որոնք գոյություն ունեն լեզվական պոտենցիալում, այսինքն նրանք, որոնք կարող են նոր կազմվել, բայց չկան, կամ հայտնի չէ, որ կան, այլև, պայմանականորեն, պոտենցիալ կարելի է համարել նաև այն բառերը, որոնք թեև ունեն մկայություն, սակայն իրենց բնույթով պոտենցիալ են, ինչպես՝ կեզուլածև, հացքություն, սֆինգսորեն, բազայական, դիմաքվածամանակահիշ և այլն²⁶:

Նոր բառեր կազմելու անհրաժեշտություն առաջանում է գրեթե ամեն մի ստեղծագործության ժամանակ (գիտական, թե գեղարվեստա-

²⁴ Այստեղ հիշատակված շատ բառեր վերցված են Հ. Մաթևոսյանի ստեղծագործություններից: Դա պատահական չէ: Հ. Մաթևոսյանը նոր բառեր կերտելու վարպետ է, որը բխում է գրողի ստեղծագործական ինքնատիպությունից:

²⁵ Պատահական չէ, որ էդ. Աղայանի «Արգի հայերենի բացատրական բառարանի» մեջ, ինչպես նշված է և առաջարկում, մի շարք բաղադրիչներով կազմվող բառեր ներկայացված են որոշ սահմանափակությամբ:

²⁶ Մոտավորապես նույնպիսի կարծիք է հայտնված Ա. Զեմսկայայի և է. Ի. Խամպիրայի հիշատակված հոդվածներում: Տե՛ս նաև А. Н. Смирницкий, К вопросу о слове, «Труды Ин-та языкознания (АН СССР)», т. IV, М., 1954, էջ 5:

կան): Հենց այս աշխատանքում, մեզ պետք եղավ, և մենք կադմեցիներ բառաշարք, բառաբաղադրիչ, սկզբնաբաղադրիչ բառերը, որոնք, ինչպես հետո պարզեցինք, չկան ԱղԱՀԲԲ-ում: Այս բառերի նմանակությամբ կարելի է կազմել նաև բազմաբաղադրիչ, բայաբաղադրիչ, միջնաբաղադրիչ, վերջնաբաղադրիչ, երկբաղադրիչ, եռաբաղադրիչ, քառաբաղադրիչ և նման այլ բաղադրություններ: Պե՞տք է, որ այս և այս կարգի այլ բառեր մտնեն բացառական նորմատիվ բառարանների մեջ: Սա, թերևս, վիճելի հարց է, սակայն մենք կարծում ենք, որ այդպիսի բառերը պետք է համարել պոտենցիալ, որոնց արտացոլումը բառարանում ոչ միայն հնարավոր չէ, այլև անհրաժեշտ էլ չէ:

Բառարանների մեջ անհրաժեշտաբար պետք է տեղ գտնեն բոլոր նորաբանությունները, բայց ոչ՝ բոլոր նորակազմությունները, կազմություններ, որոնք հաճախ պոտենցիալ բնույթ ունեն:

Այս առթիվ մի քանի խոսք նորաբանությունների մասին:

Լեզվաբանության մեջ ընդունված է նորաբանություն համարել այն բառը, որն արտահայտում է նոր առարկա, նոր հասկացություն, որ մինչ այդ չի եղել²⁷: Կա ավելի լայն ըմբռնում ևս: Ոմանք, օրինակ, նորաբանություն են համարում բոլոր այն նոր բառերն ու արտահայտությունները, որոնք սովյալ լեզվի կրողների մեջ առաջացնում են նորության, թարմության զգացողություն (Ե Շ Յ, Մ., 1974, հ. 17, էջ 472): Այս տեսանկյունից մոտենալիս՝ նորակազմ շատ բարդություններ, որոնք առաջացել են կապակցության բաղադրիչների համադրմամբ և չեն արտահայտում որևէ նոր գաղափար կամ առարկա, չենք կարող իբրև նորաբանություն դիտել: Իսկապես, մի՞թե նորաբանություն են, ասենք, դեղատվակ, վարձաչափ բառերը, որոնք կազմվել են դեղի սուվակ և վարձի չափ բառակապակցություններից: Իհարկե, ոչ: Դրանք, անտարակույս, նորակազմություններ են, բայց ոչ՝ նորաբանություններ: Նորաբանություն է, օրինակ, ձկնազգոլ բառը, որը նոր երևույթի անվանում է: Նորաբանությունը պետք է տարբերել նորակազմությունից, մանավանդ պոտենցիալ բնույթի այնպիսի նորակազմություններից, որոնց մասին մենք խոսեցինք²⁸:

Մեզ մոտ երբեմն անխտիր կերպով նորաբանություն են համարվում գրականության մեջ հանդիպող բոլոր այն նորակազմ բառերը, որոնք տեղ են գտնում հնի համեմատությամբ նոր բառարաններում²⁹: Այդ մո-

27 О. С. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1966, «неологизм», Б. И. Головин, Введение в языкознание, М., 1977, էջ 89 և այլն:

28 Լեզվաբանության մեջ կան «նորաբանություն» տերմինի նաև այլ ըմբռնումներ: Այդ մասին մանրամասն տե՛ս «Новые слова и словари новых слов», Л., 1978.

29 Տե՛ս օրինակ, Խ. Բաղիկյան, Արժեքավոր ավանդ հայ բառարանագրության մեջ, ՀՀ, 10, 1, 1979:

տեցումով նորաբանության անվան տակ են ըստ էության առնվում նաև պոտենցիալ բնույթի բառերը: Անշուշտ, նորաբանություն պետք է համարել նաև լեզվում արդեն եղած բառերի նոր իմաստով գործածությունը՝ պայմանավորված գիտության, տեխնիկայի, մշակույթի զարգացմամբ (օրինակ՝ արբանյակ, յոթնամյակ և այլն), բառեր, որոնց տրվում է իմաստաբանական նորաբանություն անվանումը: Որպես նորաբանություն կարող են հանդես գալ ոչ միայն գոյականներ, այլև ածականներ (օրինակ՝ արկածանետախուզային ֆիլմ), առանց գոյական նախադասության բառի առկայության:

Դիպլածային և պոտենցիալ բառերը հանդես են բերում մի շարք ընդհանրություններ և այդ պատճառով երբեմն դժվար է լինում դրանք իրարից սահմանազատել³⁰: Հատկապես այն դիպլածային բառերը, որոնք ստեղծվում են գործուն կաղապարների հիման վրա, ինչպես՝ կիսագործնական, կիսագրիկ, մրցապատմվածք, բրդամսակաթնատու ոչխարներ, մարմնամասնիկ, բազմագրպան, շալվարառեսակ, դրամառանձ և այլն, որոնք թեև ըստ համատեքստի դիպլածային են, սակայն լեզվական համապատասխան շրջապատում դրանք կարող են հանդես գալ որպես ոչ այդպիսիք: Համեմատիր նաև՝ շինամուլ, ջազամուլ, հրամանամուլ, գերբարակ, գերմաներ և այլն: Գրականության մեջ հանդիպում ենք նաև այնպիսի բառերի, որոնք միաժամանակ և՛ պոտենցիալ են, և՛ դիպլածային: Բերենք այդպիսի բառաստեղծման բնագրային մի բնորոշ օրինակ՝ «Թերևս, այդ ձևերը ժամանակին ավելի գրական էին դիտվում, քան ինձ վրա-ն, ինձ, մոտ-ը, որոնք նույնպես գործածված են ետաներջյան ոտանավորներում» (ՌԻՍԲԼՊ, 398): Այս նախադասության մեջ ետաներջյան³¹ բառը, որը կարելի է որակել միաժամանակ և՛ պոտեն-

30 Ոմանք «դիպլածային բառ» և «պոտենցիալ բառ» ըմբռնումները շեն տարբերակում և դիպլածային բառ տերմինի փոխարեն օգտագործում են պոտենցիալ բառ տերմինը: Այսպես, օրինակ, Ա. Ի. Սմիռնիցկին գրում է. «խոսքում յուրաքանչյուր տվյալ դեպքի համար ստեղծված բառ... կարող է մտնել կիրառության մեջ... բայց քանի դեռ այդպիսի բառը հասարակական մասշտաբով չի վերարտադրվել հաղորդակցման գործընթացում, դա իրականում կարող է ընդունվել միայն որպես «պոտենցիալ բառ», որը չի մտնում լեզվի բառային կազմի մեջ» (հիշատակված աշխատությունը, էջ 5): Դիպլածային և պոտենցիալ բառերի նույնացումը առարկության է հանդիպում մի շարք ուսումնասիրողների կողմից (տե՛ս, օրինակ, Ն. Ի. Ֆելդմանի հիշատակված աշխատությունը, էջ 66): Այս առումով պետք է հաշվի առնել նաև հետևյալը: Դիպլածային և պոտենցիալ բառերը թեև հատուկ են շատ լեզուների, սակայն տարբեր լեզուներ հանդես են բերում բառաստեղծական ինքնատիպ առանձնահատկությունների: Այդ պատճառով դիպլածային պոտենցիալ բառերը բնութագրելիս պետք է ելնել յուրաքանչյուր կոնկրետ լեզվի առանձնահատկություններից:

31 խոսքը Վ. Տերյանի «Միջնադի անուրջներ» բանաստեղծությունների ժողովածուի մասին է:

ցիալ, և՛ դիպվածային, լավագույնս ծառայում է տվյալ համատեքստին և, իհարկե, չի պատկանում հայոց լեզվի բառապաշարին:

Այսպիսով, և՛ դիպվածային, և՛ պոտենցիալ բառերը ստեղծվում են տվյալ դեպքի, տվյալ համատեքստի կարիքներին ծառայելու նպատակով:

Պոտենցիալ բառերը դիպվածային բառերի հետ ունենալով ընդհանրություններ, ինչպես նշեցինք, ունեն նաև տարբերություններ կամ բնորոշ առանձնահատկություններ, որոնք հնարավորություն են տալիս սահմանադատելու այդ երկու կարգի նորակալմ բառերը:

Ի տարբերություն դիպվածային բառերի՝ պոտենցիալ բառերը երբևիցե են գալիս աննկատելիորեն, նույն գործառությամբ և նույն կապակցությունների մեջ, ինչ ավանդական, համընդհանուր ճանաչում գտած բառերը: Ստեղծված լինելով կենդանի, գործուն կաղապարների հիման վրա, ուշադրություն չեն գրավում, նրանք խոսքում չեն ընկալվում որպես նոր կամ անսովոր բառեր, այլ ընդհակառակը՝ ընկալվում են որպես արդեն գոյություն ունեցող բառեր, որոնք նորից վերարտադրվում են տվյալ խոսքում: Սրանից կարելի է հանգել այն հետևության, որ պոտենցիալ բառերը, որոնք մի շարք կողմերով տարբերվում են նորաբանություններից, վերջինների հետ միասին գտնվում են նորմայի սահմաններում³²:

Այլ բնույթ ունեն դիպվածային բառերը, որոնք նորմայի շրջանակների մեջ չեն մտնում:

Կարելի է անել մի քանի համեմատություն դիպվածային և պոտենցիալ բառերի տարբերությունը ակնհայտ դարձնելու նպատակով:

Այսպես՝ ումի վերջածանցով հայումի, ֆրանսումի, անգլումի բառերի համաբանությամբ, նմանօրինակ բառերի կողքին, ըստ անհրաժեշտության, կազմվում են որևէ աղգության կին ներկայացուցիչը ցույց տվող բաղմամբի բառեր՝ աջաբումի, վիետնամումի, թուրքմենումի, բելոռուսումի և այլն, բառեր, որոնց թիվը կարելի է անսահմանորեն մեծացնել, քանի որ դրանք ունեն պոտենցիալ մեծ հնարավորություններ և որոնք համատեքստում ոչնչով աչքի չեն ընկնում: Նույն ումի վերջածանցով, մեկ այլ մասնակաղապարով ունենք զբաղմունք, մասնագիտություն ցույց տվող բժշկումի, ֆառուղաբումի, ուսուցչումի, դեբասսանումի և այլն, բայց չունենք, օրինակ, դիրեկտորումի, դեպուտատումի, լեզվաբանումի,

³² Հայոց լեզվի բացատրական բառարաններում բառարանագիրների կողմից ոչ հազվադեպ կազմվում են այնպիսի բառեր, որոնք թեև չունեն վկայություն, սակայն նրանց գոյությունը միանգամայն օրինալահական է և պատճառաբանված հիմնաբառի և նմանօրինակ բառերի գոյությամբ: Այդպիսի բառերը ըստ էության պոտենցիալ բառեր են՝ կազմված հիմնաբառից՝ կենսունակ ածանցների միջոցով:

երկրաբանութիւնի և այլնի եւ եթէ մեկը համարանությամբ կազմում է այս-
պիսի ձևեր, ապա դրանք անմիջապէս աչքի են ընկնում որպէս ոչ սովոր-
ական, ոչ կանոնական, դիպվածային ձևեր:

Մեկ այլ օրինակ. շորացու, մսացու և նման բառերի օրինակով
ացու ածանցով խոսակցական լեզվում կազմվում են բաղմաթիւ նոր
բառեր, ինչպէս՝ կոպեխացու, խորովածացու, յութկացու, զոգնոցացու
և այլն, և այլն որոնք, պոտենցիալ բնույթ ունենալով Բայց ահա նախնա-
ցու, փեսացու մասնակազապարի օրինակով ստեղծված անբացու բա-
ռը, որը գործածվել էր երգիծական մի պատմվածքում (Գ. 1973, № 4,
94), անմիջապէս աչքի էր ընկնում անսովորությամբ և հենց դրանով
կատարում իր արտահայտչական, երգիծական դերը՝ տվյալ խոսքային
շրջապատին համապատասխան: Կամ թե՛ ունենք, օրինակ, թեյել, նա-
շել, նախանաշել, բայց չունենք նույն կազապարով կազմված սրճել
(սուրճ խմել), մրգել (միրգ ուտել) բառերը, և այդ սկզբունքով կազմված
նոր բառերը, իհարկե, կդիտվեն որպէս դիպվածային բառեր: Ուրեմն,
դիպվածային և պոտենցիալ բառերը իրարից տարբերակելու հարցում
կարևոր է այն, թե նորակազմ բառերը ինչպիսի հարաբերութեան մեջ
են գտնվում լեզվի ավանդական նորմաների նկատմամբ՝ հակադրվում
են, թե համապատասխանում: Եթե համապատասխանում են՝ պոտեն-
ցիալ բառեր են, եթե հակադրվում՝ դիպվածային են:

Ձարմանալի չէ, որ հաճախ ոչ կանոնական բառեր են կազմում
օտարերկրացիները, որոնք լավ չտիրապետելով լեզվի նորմաներին և
հենվելով միայն բառակազմական կաղապարների վրա, գործածում են
լեզվում գոյութուն չունեցող բառեր³³:

Այսպիսով, եթե դիպվածային բառերը իրենց անսովոր կազմու-
թյամբ անմիջապէս աչքի են ընկնում, առանձնանալով լեզվի ընդհանուր
ճանաչում գտած համագործածական բառերից, ապա պոտենցիալ բա-
ռերը, ընդհակառակը, ամենին ուշադրութուն չեն դրավում, և նրանց
նորակազմ լինելը հաճախ չի էլ գիտակցվում:

Ի տարբերութուն դիպվածային բառերի, որոնք ապրում են միայն
տվյալ համատեքստում կամ հաճախ մեկ օրվա կյանք են ունենում
(օրինակ՝ լեզվաբուժական, գառափութություն, մենաբրեյ, ներշնչե-
րական) և մեծ մասամբ չեն մտնում բառարանների մեջ, պոտեն-
ցիալ բառերը, թեև նույնպէս համատեքստային բառեր են, բայց բա-
ռապաշարի (ինչպէս և բառարանի) մեջ ընդգրկվելու ավելի օրինա-
կական հնարավորութուն ունեն, քանի որ դրանք կանոնավոր բառեր

³³ Մեր մի հոնգարացի ծանոթը, որը փոքր-ինչ հայերեն գիտե, ծբարի վրա գրում
է՝ լեզվաբանուհի Թերեզա Ղարազուլյանին:

են: Օրինակ, պանրավաճառ, ծրարավաճառ և նման բառերը, եթե այսօր պոտենցիալ են, վաղը կարող են դառնալ նորաբանություն:

Պոտենցիալ բառերի ամրակայումը և տարածումը պայմանավորված է այն փաստով, թե տվյալ երևույթի անվանումը որքան պատահական կամ մշտական բնույթ ունի:

Այնուհետև, նշեցինք, որ և՛ դիպվածային, և՛ պոտենցիալ բառերը կազմվում են լեզվի ավանդական կաղապարների հիման վրա, սակայն եթե պոտենցիալ բառերի համար դա միանգամայն պարտադիր է, ապա դիպվածային բառերի համար՝ ոչ միշտ է պարտադիր, քանի որ դիպվածային բառերում երբեմն խախտվում են բառակազմական ավանդական կաղապարները (օրինակ՝ քեզապաշտ, քոյասիրահար, դուական, ամենամիակ):

Պոտենցիալ բառերը հեղինակային իրավունքի կամ առաջին օգտագործողի հարց չեն առաջադրում, քանի որ դրանք ստեղծվում են աննկատ, տարերայնորեն, այն դեպքում, երբ նորաստեղծ մի շարք բառեր հեղինակային են, այսինքն հայտնի է դրանց ստեղծագործողը (օրինակ՝ գալիֆեաբեր (ԵԶ), տխրադալուկ (ՎՏ), ամենապոնեմ (ԵԶ), պոեզոգոտեա (ԵԶ), ամենաճառ (ԵԶ), ամենագազան (ՆԶ)):

Պոտենցիալ բառերի կենդանացման հնարավորությունները անսահման են, այն դեպքում, երբ դիպվածային բառերի տարածման հրահրավորությունները շատ փոքր են:

Թեև պոտենցիալ բառերը ոչնչով չեն տարբերվում համագործածական բառերից, սակայն դրանց հանդիպման հնարավորությունը լեզվում մեծ չէ (համատ. օրինակ՝ սեամեջֆ ձկներ, գետաֆառե ցանկապատ):

Ստեղծվելով համապատասխան տիպի կամ մասնակաղապարի օրինակով, այսինքն կառուցվածքային-իմաստային շատ կենսունակ կաղապարով, պոտենցիալ բառերը չեն ընկալվում որպես նորակազմ բառեր: Այդպիսի բառերը, ինչպես ասացինք, հազվադեպ են կրկնվում և ամեն անգամ թվում է, թե հիմա են կազմվում: Դա խոսում է տվյալ բառակազմական տիպի նաև մեծ արտադրողականության մասին:

Պետք է ասել, որ բառակազմական նորման, սրպես լեզվաբանական երևույթ, լեզվաբանական գրականության մեջ դեռևս անհրաժեշտ չափով չի ուսումնասիրվել: Հատկապես լուսաբանման կարիք է զգում բառային համակարգի, բառակազմական կաղապարների և նորմայի փոխհարաբերության հարցը բառակազմության մեջ:

Բառակազմական նորման, ինչպես և առհասարակ նորման, որպես լեզվաբանական ըմբռնում, պատմական բնույթ ունի, այդ պատճառով մասնավորապես բառակազմական նորման որոշելիս՝ անհրաժեշտ կլինի նկատի ունենալ տվյալ ժամանակաշրջանի նորակազմ բառերը, որոնք

ստեղծվում են լեզվի համակարգով պայմանավորված կաղապարների հիման վրա:

Լեզվաբանության մեջ նորակազմ բառերը սովորաբար բաժանում են երեք խմբի՝ նորաբանություններ, պոսեցիալ բառեր և դիպլոմա-յին բառեր³⁴: Այդ երեք տիպի նորակազմ բառերից լեզվաբանների մեծ մասը նորմատիվ է համարում միայն նորաբանությունները, իսկ դիպլոմային, ոմանք նաև պոսեցիալ բառերը նորմայի սահմաններից դուրս են դնում:

Ինչպես հայտնի է, Պրադայի լեզվաբանական դպրոցի նվաճումների մեջ մեծ տեղ է գրավում գրական լեզվի և նորմայի հետ կապված մի շարք հարցերի բազմակողմանի և նորովի լուսաբանումը, նորմայի դինամիկության, շարժում լինելու գաղափարը, որը հաստատվում է բազմաթիվ լեզուների փաստերով: Ըստ այդմ՝ նորման դիտվում է, որպես խոսքային գործունեության հասարակական-պատմական արդյունք: Խոսքային գործունեությունը մի կողմից ամրակալում է համակարգի ավանդական իրացումները, մյուս կողմից՝ ստեղծում լեզվական նոր փաստեր³⁵: Դա նշանակում է, որ նորման լայն ըմբռնում է, որը չի կարող հանգեցնել միայն լեզվական ավանդական իրողություններին, այլ պայմանավորված է նաև լեզվի հասարակական գործունեությամբ:

Այս տեսակետից նորմային մոտենալու դեպքում, միանգամայն հասկանալի է, որ պոսեցիալ բառերը նույնպես կանոնական կլինեն, քանի որ նրանք այնպիսի բառեր են, որոնք թեև լեզվական ավանդություն չունեն, սակայն նրանց հայտնվելը տվյալ համատեքստում, խոսքային տվյալ իրադրության մեջ, միանգամայն օրինաչափական է և պատճառաբանված հաղորդակցման պրոցեսով:

Բոլոր նորակազմ բառերը, որոնք դառնում են լեզվի սեփականություն, իրացնում են լեզվի բառակազմական պոսեցիալ հնարավորությունները, այսինքն բառաստեղծական այն կաղապարները, որոնք գոյություն ունեն լեզվի համակարգում: Այն նորաստեղծ, միանգամայն բառերը, որոնք հակադրվում են լեզվի բառակազմական պոսեցիային և ունեն խոսքային արժեք, ո՛չ լեզվական, նույնպես կարիք ունեն հատուկ ուսումնասիրության:

34 *Տե՛ս* В. Н. Хохлачева, Индивидуальное словообразование в русском литературном языке XIX-го века. (Имена существительные). «Материалы исследования по истории русского литературного языка», т. V. М., 1962, էջ 166—182:

35 *Տե՛ս* Л. И. Скворцов, Норма. Литературный язык. Культура речи. «Актуальные проблемы культуры речи». М., 1970, էջ 53.

Հայերենի բառագիտության համար շատ արժեքավոր կլինի ամեն կարգի նոր բառերի հավաքումը, գրանցումը և հրատարակումը տեղեկատու, ոչ նորմատիվ բառարանում, որոշակի ժամանակահատվածի հաշվառումով:

Այդպիսի ձեռնարկումը մեծ շափով կօգնի հետևելու բառաստեղծման ընդհանուր պրոցեսին, քննելու բառապաշարի հարստացման, լեզվի զարգացման ուղիները³⁶:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԻ—Ավետիք Իսահայան

ԱղԱՀՔՔ—Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976

Առ.—«Առողջապահություն», ամսագիր, Երևան

ԲԵՀ—Բանբեր Երևանի համալսարանի

ԲԵԽ-ԻԳ—Բանավոր խոսքից

Գ—«Գարուն», ամսագիր, Երևան

ԳԲ—«Գրական թերթ», շաբաթաթերթ, Երևան

ԴԼՏ—«Գիտություն և տեխնիկա», ամսագիր, Երևան

ԴՍ—Դեղամ Սարյան

ԴԴ—Դերենիկ Դեմիրճյան

ԴՎ—Դանիել Վարուժան

ԵԵ—«Երեկոյան Երևան» օրաթերթ, Երևան

ԵԶ—Եղիշե Զարենց

ԶԽՄՀ—Զաքար Խալափյան, Մեծնոդ հանոդ, Երևան, 1975

ՀԴ-ԻԳ—Հեռուստատեսային հաղորդումներից

ՀՃ—«Հայերենիքի ձայն» լրագիր, Երևան

ՀՄ—Հրանտ Մաթևոսյան

ՀՄՕ—Հրանտ Մաթևոսյան, Օգոստոս, Երևան, 1967

ՀՄԾ—Հրանտ Մաթևոսյան, Ծառերը, Երևան, 1978

ՀՇ—Հովհաննես Շիրազ

ՀՇԱԶԳ—Հ. Շիրազ, Առակս դինչ ցուցանե..., Երևան, 1978

ՀՍ—Համո Սահյան

ՀՖ—«Հայաստանի ֆիզիկոսներին», լրագիր, Երևան

ՆԶ—Նաիրի Զարյան

Ո—«Ողջի»

ՊԲՀ—«Պատմա-բանասիրական հանդես», Երևան

ՊՍ—Պարույր Սևակ

ՊՍԱՄ—Պ. Սևակ, Անհաշտ մտերմություն, Երևան, 1953

³⁶ Հետաքրքիր կլինի, եթե պարզենք, օրինակ, թե բուն նորաբանությունները, հեղինակային-ստեղծագործական բառերը, պոտենցիալ բառերը, դիպվածաբանությունները և այլն, ինչպիսի համամասնությամբ են հանդես գալիս ժամանակակից հայերենում:

ՊՆԹԶ—Պ. Սևակ, նորից քնն հետ, Երևան, 1954

ՊԱՄԱՄ—Պ. Սևակ, Մարդը ափի մեջ, Երևան, 1963

ՊՍԱԶ—Պ. Սևակ, Անլուծի Զանգակատուն, Երևան, 1966

ՌԴ—Ռազմիկ Դավության

ՌԻԱԲԼՊ—Ռ. Իշխանյան, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Երևան, 1978

ՌԻԱՀՀԵԽ—Ռ. Իշխանյան, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1971

ՌԻԻԳ—Ռադիոհաղորդումներից

ՍԱԵԶ—Ս. Աղաբաբյան, Եղիշ Զարենց, Երևան, 1973

ՍՀ—«Սովետական Հայաստան», օրաթերթ, Երևան

ՍԳ—«Սովետական գրականություն», ամսագիր, Երևան

ՍԳԱԱԱԺՀ—Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978

ՎՏ—Վահան Տերյան

Խ. Գ. ԲԱԴԻՅԱՆ

ԿՈՉԱԿԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Կոչականը լեզվի շարահյուսական համակարգի կարևոր բաղադրիչներից մեկն է։ Հայ քերականագիտության մեջ դարեր շարունակ այն դիտվել է որպես նախադասության անդամ՝ ձևավորված առանձին հոլովով (կոչական հոլով)։ Լեզվի վաղ շրջանում, (իսկ բարբառներում՝ մինչև այժմ) կոչականը պահել է իր առանձնահատուկ վերջավորությունները¹։ Սակայն, հետագայում կոչականը հայերենում կորցնում է իր հոլովական վերջավորությունները և նույնանում ուղղական հոլովի հետ։ Այդ է պատճառը, որ XIX դարի 2-րդ կեսից սկսած հայ քերականները այն դիտել են որպես սպասարկու բառեր՝ դուրս թողնելով դրանք նախադասության կառուցվածքից։ Այժմ էլ շատերի կողմից կոչականները դիտվում են որպես արտանախադասական միավորներ։

¹ Հին լեզուներում (սանսկրիտ, հին հունարեն, լատիներեն, հին սլավոներեն, հին առաբեն և այլն) կոչականները ձևով (քերականորեն) տարբերակվել են։ ...Հունարենի նմանությամբ կոչականը որպես առանձին հոլով է դիտվել նաև գրաբարի հին քերականություններում։

...Արդի ժողովրդական խոսակցական հայերենում անձնանունները կոչական լինելու դեպքում երբեմն ստանում են հատուկ ձև (Հայրապետ-Հայրո, Կարապետ-Կարո, Վարսենիկ-Վարսո և այլն)։ Հ. Պետրոսյան, Ս. Դալստյան, Բ. Ղառազուլյան, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975, էջ 156։